International Alert.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՄԵՐՁԵՑՈՒՄ

Քաղաքացիական խաղաղարարության 20 տարին ղարաբաղյան հիմնախնդրի համապատկերում

Understanding conflict. Building peace.

ՍՈՒԻՑՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

International Alert

International Alert կազմակերպությունն աջակցում է հակամարտությունների լուծման խաղաղ ուղիների որոնմանը։

Մենք հանդիսանում ենք միջազգային առաջատար խաղաղարար կազմակերպություններից մեկը՝ խաղաղության հիմունքների ձևավորմանը միտված գրեթե 30-ամյա աշխատանքի փորձով։

Մենք աշխարհի ամենատարբեր տարածաշրջաններում համագործակցում ենք տեղական հանրությունների հետ՝ օգնելով նրանց խաղաղություն կառուցելու։ Բացի դրանից, խորհրդատվական ծառայություններ ենք մատուցում կառավարություններին, կազմակերպություններին և ընկերություններին առ այն, թե ինչպես ապահովել խաղաղությունը։

Մեր ջանքերը նպատակաուղղված են այն գործոններին, որոնք ազդում են խաղաղության վրա, ինչպիսին են, օրինակ, պետական կառավարման մեթոդները, տնտեսությունը, գենդերային հարաբերությունները, սոցիալական զարգացումը, կլիմայի փոփոխությունը, ինչպես նաև առևտրային ու միջազգային կազմակերպությունների դերը բարձր ռիսկային տարածաշրջաններում։

www.international-alert.org

International Alert կազմակերպությունը սույն ուսումնասիրության անցկացման համար շնորհակալություն է հայտնում Եվրոպական Միությանը։ International Alert կազմակերպությունն աջակցության համար երախտագիտություն է հայտնում նաև հետևյալ ռազմավարական հովանավորներին՝ Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարությանը (UKAID), Զարգացման ոլորտում միջազգային համագործակցության շվեդական գործակալությանը (SIDA), Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը, Իռլանդիայի արտաքին գործերի և առևտրի նախարարությանը։

Սույն հաշվետվությունում արտահայտված կարծիքները պատկանում են բացառապես հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն International Alert կազմակերպության և մեր հովանավորների տեսակետը կամ քաղաքականությունը։

© International Alert 2013. Օգոստոս, 2013թ.
Բոլոր իրավունքները պաշտպանված են։ Սույն հրապարակման ոչ մի հատված չի կարող առանց հեղինակի ու փոխառման աղբյուրի անվան ամբողջական նշման վերարտադրվել կամ հաղորդվել ցանկացած ձևով կամ ցանկացած միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային, մեխանիկական, լուսապատճենահանման միջոցները, ձայնագրման-տեսագրման և տեղեկատվության պահպանման ու ներբեռնման մյուս համակարգերը։

Մակետ՝ D. R. ink, www.d-r-ink.com
Շապիկի լուսանկարը՝ © Pavel Khorenyan/iStockphoto

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՄԵՐՁԵՑՈՒՄ

Քաղաքացիական խաղաղարարության 20 տարին ղարաբաղյան հիմնախնդրի համապատկերում

Օգոստոս, 2013

Երախտագիտության խոսքեր

International Alert կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր մասնակցել են այս հետազոտություններին։ Մասնավորապես, մենք շնորհակալ ենք հաշվետվությունների հեղինակներ Գեղամ Բաղդասարյանին, Ավազ Հասանովին, Միքայել Զոլյանին, Մասիս Մայիլյանին և Գյուլշան Փաշաևային՝ ուսումնասիրության իրականացման և սույն ժողովածուի պատրաստման համար։

Բովանդակություն

Հեղինակների մասին 4

Համառոտ ակնարկ 5

Հայացք Բաքվից 9

Հայացք Երևանից 18

Հայացք Ստեփանակերտից 28

Հեղինակների մասին

Գեղամ Բաղդասարյանը զբաղվել է լրագրությամբ և քաղաքականությամբ, հանդիսանում է Ստեփանակերտի մամուլի ակումբի նախագահը՝ կազմակերպություն, որը 1988-ից ի վեր դարձել է Լեռնային Ղարաբաղում ազատ ԶԼՄ-ների կենտրոն: 2004-2008 թվականներին խմբագրել է հանրահանաչ «Դեմո» թերթը, ներկայումս «Անալիտիկոն» վերլուծական ամսագրի գլխավոր խմբագիրն է:

Ավազ Հասանովը «Հումանիտար հետազոտությունների ընկերություն» ոչ կառավարական կազմակերպության տնօրենն է, որը ժողովրդավարական բարեփոխումների է ձգտում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և քաղաքացիական հասարակության կառուցման գործում քաղաքացիների ավելի հետևողական մասնակցության ապահովման ճանապարհով: Լինելով քաղաքացիական հասարակության ամենաակտիվ գործիչներից մեկը՝ Ավազ Հասանովը նաև հանդիսանում է «Մարդու իրավունքներն Ադրբեջանում» հանդեսի խմբագիրը և հաճախակի մասնակցում է Հայաստանի իր գործընկերների հետ հանդիպում-երկխոսություններին:

Միքայել Զոլյանը պատմաբան է և քաղաքական վերլուծաբան, Հարավային Կովկասում Հենրիխ Բյուլի հիմնադրամի տարածաշրջանային ծրագրի կրթաթոշակառու: Ներկայումս նա դասավանդում է Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում և աշխատում է «Երևանի մամուլի ակումբ» հասարակական կազմակերպությունում: Միքայել Զոլյանի գիտական հետաքրքրությունների ոլորտը ներառում է ազգայնամոլության և էթնիկականության հարցերը, էթնոքաղաքական հակամարտությունները, ժողովրդավարացման գործընթացները և հասարակական շարժումները: Հայաստանում և արտասահմանում հրապարակված մի շարք հոդվածների հեղինակ է:

Մասիս Մայիլյանը Արտաքին քաղաքականության և անվտանգության հանրային խորհրդի (FSPC) նախագահն է: Խորհուրդը ոչ կառավարական գործընկերության և վերլուծական կենտրոն է Լեռնային Ղարաբաղում: Լինելով փորձառու քաղաքական գործիչ ու դիվանագետ, Մասիս Մայիլյանը մասնակցել է պաշտոնական (Track I) բանակցություններին, ժողովրդական դիվանագիտության (Track II) համաժողովներին և քաղաքական փորձագետների՝ կովկասյան տարածաշրջանին ու հայ-թուրքական հարաբերություններին նվիրված քննարկումներին: Հեղինակ է ղարաբաղյան հիմնախնդրի ու տարածաշրջանային խնդիրների մասին բազմաթիվ հոդվածների ու վերլուծական հաշվետվությունների:

Գյուլշան Փաշաևան Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրենն է: Նախկինում նա աշխատել է Ադրբեջանում ՄԱԿ-ի առաքելությունում, հանդիսանում էր ՅՈՒՆԻՖԵՄ-ի (այժմ՝ ՄԱԿ-Կանայք) «Կանայք հանուն Հարավային Կովկասում հակամարտությունների կանխարգելման և խաղաղության կառուցման» տարածաշրջանային ծրագրի (2001-2006) ազգային համակարգող, ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության դեպարտամենտի աշխատակից (2007-2009): 1996-2001-ին Գյուլշան Փաշաևան ղեկավարել է «Հակամարտությունների ուսումնասիրման կենտրոնը» և դասավանդել է Ադրբեջանի տարբեր պետական ու մասնավոր համալսարաններում: Դոկտոր Փաշաևան մասնագիտանում է հակամարտությունների կարգավորման և անվտանգության, գենդերային ու լեզվական քաղաքականության հարցերի ոլորտում: Ավելի քան 50 հրապարակումների հեղինակ է:

Համառոտ ակնարկ

Ներածություն

Հրադադարի մասին համաձայնագրի կնքումից մոտ երկու տասնամյակ անց ղարաբաղյան հիմնախնդրի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ ընթացող պաշտոնական խաղաղ գործընթացն այդպես էլ չի ավարտվել կարգավորմամբ: Ներկայումս այդ տարածաշրջանում քաղաքացիական հասարակության խմբերը փորձում են խաղաղության հեռանկարները մերձեցնել քաղաքական բանակցություններից դուրս տարբեր մակարդակներում: Սույն հետազոտությունն իրենից ներկայացնում է քաղաքացիական հասարակության քսանամյա խաղարարար ջանքերի հավաքական իմաստավորման նորարարական փորձ: Ուսումնասիրությունը բաղկացած է երեք մասից, որոնցից յուրաքանչյուրն արտացոլում է մի հանրության շրջանակներում խաղաղարար ծրագրերում աշխատող տեղական հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) ու քաղաքացիական հասարակության առաջնորդների մոտ գերակայող կարծիքները: Դրանք համատեղ իրենցից ներկայացնում են հենց իր՝ խաղաղարար հանրույթի կողմից հակամարտության փոխակերպման գործում ունեցած սեփական դերի գնահատման հետահայաց պատկեր:

International Alert կազմակերպությունը Հարավային Կովկասի հակամարտության փոխակերպմամբ զբաղվում է 1990-ականների կեսերից: Ղարաբաղյան հակամարտության համապատկերում մենք ձգտում ենք հակամարտության տարբեր կողմերում մեծացնել հանրության ամենատարբեր հատվածների ներուժը վստահության կառուցման ոլորտում, դիտարկել հակամարտության այլընտրանքային տարբերակներ և խաղաղության կոչեր անել որոշում ընդունող անձանց շրջանում: Սույն հետազոտությունը, որն իրականացվել է Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով Եվրոպական գործընկերության շրջանակներում (EPNK), առաջին քայլն է մի գործընթացում, որը նպաստում է համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը և հանրություններում հակամարտության մասին ոչ ստանդարտ մտածողության ձևավորմանը: International Alert կազմակերպությունը ժողովել է հակամարտության տարածաշրջանի մի խումբ փորձագետների՝ այլ հակամարտությունների օրինակների հիման վրա համեմատական ուսուցման և տվյալ հակամարտության փոխակերպման վերաբերյալ նոր գաղափարներն ու կարծիքները բնակչության ամենատարբեր խմբերի հետ լայն քննարկումների խթանման նպատակով: Որպես այս համեմատական աշխատանքի մեկնակետ՝ խումբը վերլուծել է քաղաքացիական հասարակության կողմից խաղարար ջանքերի՝ այս պահին առկա ընկալումը սեփական հակամարտության համապատկերում: Այդ աշխատանքի արդյունքներն էլ կազմել են սույն հետազոտության հենքը:

Հետազոտության նպատակները հետևյալն են՝

1. Հանրություններից յուրաքանչյուրի անդամներին հնարավորություն ընձեռել կանգ առնելու և վերլուծելու ինչպես ձեռնարկված ջանքերը, այնպես էլ հանրությունների մակարդակով քաղած դասերը խաղաղության համար պայքարի 20 տարիների ընթացքում:
2. Հանրությունների միջև տեղեկատվություն փոխանակել խաղաղարարության ոլորտում ներդրված ջանքերի մասին, բարելավել տարբեր տեսակետների ընկալումը և հանրություններին օգնել բացահայտելու ընդհանուր շահերի ոլորտը:
3. Քաղաքացիական խաղաղարարության գործընթացի թերացումների բացահայտում, որպես այլ հակամարտությունների ուսումնասիրման համար հիմք:

Այդ հաշվետվություններից յուրաքանչյուրն սկսվում է ավելի քան քսան տարի իրականացվող խաղաղարար գործունեության ակնկալվող նպատակներից, որից հետո բերվում է այդ նպատակներին հասնելու արդյունավետության գնահատականը, ինչպես նաև այդ գործունեության ազդեցությունը քաղաքական հարթությունում և այդ ծրագրերի բուն մասնակիցների վրա: Բացի դրանից, հեղինակներն ուսումնասիրում են այն արտաքին գործոնները, որոնք, հանրությունների կարծիքով, ներազդել են խաղաղարար նախագծերի վրա:

Հետազոտական գործընթացը կանխամտածված էր այնպես, որ ներառվեն ամենատարբեր խմբեր, օգտագործվեն մասնակցային մոտեցումներ՝ քաղաքացիական հասարակության զանազան հատվածների կարծիքների լայն համապատկերի լուսաբանման համար: Փորձագետներն աշխատել են ֆոկուս խմբերի հետ և հարցազրույցներ են վարել քաղաքացիական հասարակության այն առանցքային ներկայացուցիչների

հետ, ովքեր մասնակցել են իրենց հանրությունում տվյալ հակամարտության համապատկերում տարվող խաղաղարար աշխատանքին, ինչպես նաև կատարել են ընդգրկուն երկրորդային հետազոտություն։ Ավելի քան 100 մարդ է մասնակցել ֆոկուս խմբերին ու հարցազրույցներին բոլոր երեք հանրություններում։ Հետազոտությանը մասնակցել են ՀԿ-ներ, կանանց կազմակերպություններ, պատերազմի զոհերի մայրերի, փախստականների, երիտասարդ ակտիվիստների, պատերազմի վետերանների միություններ, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, կրոնական գործիչներ, գիտնականներ ու վերլուծաբաններ։

Սույն հետազոտության միակ սահմանափակումը եղել է բացառապես քաղաքացիական հասարակության այն խմբերի ընդգրկումը, որոնք արդեն իսկ ներգրավված են խաղաղարար գործունեության մեջ ու հաճախ հայտնվում են մարգինալ վիճակում, և որոնց համար դժվարամատչելի են հանրության լայն շերտերը։ Ուստի այստեղ ներկայացված կարծիքները կարող են և չարտահայտել ողջ հանրության կարծիքը, դրանք ավելի շատ արտացոլում են քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչների ներքին հայացքները, ովքեր արդեն իսկ մասնակցում են խաղաղարարությանը։ Այս ուսումնասիրությունն իրենից ներկայացնում է մի ակնթարթային հատույթ, որը թույլ է տալիս պատկերացում կազմել խաղաղարար ջանքերի վերաբերյալ քաղաքացիական հասարակության խմբերի բավականին ընդգրկուն դաշտի կարծիքների մասին։ Այն իր առջև նպատակ չի դնում սպառիչ բնորոշում տալ կամ խորունկ վերլուծության ենթարկել առկա խաղաղարար նախաձեռնությունները։ Հետազոտությունների տվյալները թույլ են տալիս լավագույնս պատկերացում կազմել տեղացի գործիչների կարծիքների մասին իրենց իսկ աշխատանքի վերաբերյալ ավելի լայն համատեքստում։ Մենք գտնում ենք, որ դրանք համատեղ կարող են կառուցակարգված հիշողության արժեքավոր ռեսուրս դառնալ խաղաղության կառուցման բնագավառում հետագա աշխատանքների համար։

Արդյունքների համառոտ շարադրանք

Յուրաքանչյուր հաշվետվություն արտացոլում է կոնկրետ հանրության կարծիքները, ուստի և տարբերվում է այնտեղ արտահայտված կարծիքներով ու մոտեցումներով։ Այդուհանդերձ, հարկ է նշել, որ բազմաթիվ դրույթներ նույնկերպ են ընկալվում հակամարտության կողմերում։ Դրանց կարելի է միավորել հետևյալ խմբերում՝ խաղաղարարության առաջընթացի վրա ազդող գործոններ, թերություններ՝ կիրառվող մոտեցումներում և ձեռքբերումներ։

Ստորև համառոտ շարադրանքում ներկայացված են հետազոտության առանցքային ընդհանուր արդյունքները, որոնք հետագա իմաստավորման հնարավորություն են տալիս։ Մենք, հարկավ, հասկանում ենք արդյունքների համառոտ շարադրանքին հատուկ թերատությունն ու սահմանափակվածությունը, ուստի ընթերցողներին խորհուրդ ենք տալիս հանգամանորեն ծանոթանալու բուն հաշվետվություններին՝ հասու լինելու համար հավելյալ մանրամասնություններին, կարծիքներին, նրբերանգներին ու օրինակներին։

Խաղաղարարության վրա ներազդող գործոններ

- Էլիտաների կողմից որոշումների ընդունման գործընթացում աշխարհաքաղաքական և արտաքին ուժերն ավելի նշանակալից դեր են խաղում, քան բնակչության երկարաժամկետ շահերը, որոնց ներկայացնում են այդ խմբերը։ «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը ծառայում է էլիտաների շահերին, ինչը վատագույն դեպքում խաղաղարար օրակարգը ոչ հրատապ է դարձնում բարձրագույն մակարդակների համար։
- Պաշտոնական և ոչ պաշտոնական մասնակիցների ու գործընթացների միջև բացակայում է երկխոսության իրական մեխանիզմը։ Պաշտոնական ինստիտուտների կողմից խաղաղ գործընթացի մենաշնորհումը հանգեցնում է քաղաքացիական հասարակության մարգինալացմանը։ Որոշ դեպքերում էլ խաղաղարարներին դիտարկում են որպես անդորրը խախտողների, նրանք քննադատության առարկա են դառնում իրենց իսկ հանրությունում։
- Քաղաքացիական հասարակությունը թույլ է լինում հակամարտությամբ տարված յուրաքանչյուր հանրությունում, նրան ավելի ուժեղ աջակցություն է պետք այլընտրանքային մտածողության ամրապնդման և ավելի լայն տարածման համար։ Միևնույն ժամանակ, «պետական ՀԿ-ների» (GONGO – a government organized non-governmental organization) ստեղծումը կազմաքանդում է քաղաքացիական հասարակության հատվածի անկախությունը և, մասնավորապես, խաղաղարար նախագծերի նկատմամբ վստահությունը։ Աճում է խաղաղարար ջանքերի քաղաքականացման ռիսկը։

- Մեծ անհամաչափություն կա պատերազմի և դիմակայության գաղափարախոսությունում արվող ներդրումների և խաղաղության կառուցման համար մատչելի ռեսուրսների միջև։ Արդյունքում խաղաղարարներն ստիպված են լինում հաղթահարել իրենց հետ դիմակայության մեջ գտնվող ուժերի խոչընդոտները, երբեմն էլ այն տպավորությունն է ստեղծվում, որ նրանց բոլոր ձեռքբերումներն աննկատ են մնում։
- Խաղաղարար շատ նախաձեռնություններ տարատեսակ են ու վատ համակարգված։ Միջազգային հանրության երկարատև նվիրվածության կամ ընդհանուր ռազմավարության բացակայությունը հանգեցնում է գործընթացի դրվագացման և անկայունության։ Որպես հիմնախնդիր է ներկայացված նաև տեղերում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների/գործիչների միջև համակարգման բացակայությունը, խաղաղարարության նկատմամբ կիրառվող մոտեցումներում առկա թերությունները։
- Քաղաքացիների ընդամենը ոչ մեծ թվաքանակ է ներգրավված խաղաղարար գործունեության մեջ, ինչի արդյունքում սահմանափակ է մնում հանրության ավելի լայն ընդգրկման ներուժը։ Խաղաղարարները պայքարում են հանուն հավասարակշռության պահպանման՝ բնակչության ավելի լայն ներգրավման անհրաժեշտության և ավելի խոր վստահության նվաճման գործընթացի ամրապնդման և ուժեղացման համար բավարար ժամանակ ու տարածություն հատկացնելու միջև՝ վստահություն, որը տևական հեռանկարում դնում է կայուն փոխգործակցության հիմքը։
- Հաճախ ծրագրերը սահմանափակված են բավականին նեղ շրջանակներով և չեն օգտագործում գործընթացի շրջանակներից դուրս գտնվող մարդկանց ներուժը, օրինակ՝ պաշտոնաթող դիվանագետների, սփյուռքի, բիզնեսի ներկայացուցչիների, ուսուցիչների, մշակույթի գործիչների, տեղական վարչակազմերի հնարավորությունները։
- Ոչ բավարար ջանքեր են ներդրվել ավելի երիտասարդ սերնդի ներգրավման ուղղությամբ արդյունավետ մոտեցման մշակման համար։ Այս խումբը տիրապետում է մյուս կողմի հետ փոխկապերի սոսկ աննշան փորձի և գտնվում է ազգայնամոլական հռետորաբանության ու ԶԼՄ-ների կողմից քարոզվող թշնամու կերպարի ավելի ուժեղ ազդեցության տակ։
- Տարեցտարի զգալիորեն կրճատվել է ԶԼՄ-ների աշխատանքը արհեստավարժության բարձրացման, էթիկական վերաբերմունքի և միջսահմանային շփումների ստեղծման ուղղությամբ։ Նախկինում հաստատված կապերը և համատեղ նախաձեռնությունների անցկացման նկատմամբ խթանը թուլացել է։ Արհեստավարժ լրագրողների միջև հարաբերությունների հաստատումն առանձնակի կարևոր դեր ունի հակամարտությունների սրումը կանխելու գործում, քանի որ ԶԼՄ-ներն ունեն գերակայող ազգային դիսկուրսի վրա ներազդելու ներուժ և դրական դեր են խաղում տեղեկատվական պատերազմի ազդեցությանը հակազդելու գործում։
- Խաղաղարար նախաձեռնությունների և դրանց արդյունքների մասին հանրության ցածր իրազեկվածություն։ Այդ նախաձեռնությունների մասնակիցները ռեսուրսներ ու հնարավորություններ չունեն տեղեկությունները տարածելու և հաղթահարելու իրենց նկատմամբ հանրության քննադատական վերաբերմունքը։
- Խաղաղարար նախաձեռնությունները ծագում ու շարունակում են գոյություն ունենալ հիմնականում միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների աջակցության շնորհիվ։ Չնայած այն հանգամանքին, որ որոշ ծրագրեր էլ երբեմն-երբեմն ծագում են տեղական խմբերի նախաձեռնությամբ, խաղաղարար գործունեությունը շարունակում է խարսխված մնալ միջազգային կազմակերպությունների աջակցության վրա, և նրանց օգնությունը կենսականորեն կարևոր է մնում։

Խաղաղարարության շահաբաժիններն այս պահին. ընթացիկ արդյունքներ

Վերջին 20 տարիների ընթացքում խաղաղարարության հիմնախնդիրները հանգեցրել են այն բանին, որ նրա ազդեցությունը տարրալուծվել է, ու երբեմն շատ դժվար է լինում այն հայտնաբերել։ Սակայն սույն ուսումնասիրությունը երևան է հանել տարբեր փորձագետների այն համոզվածությունը, որ առայսօր ծախսված ջանքերն իրենցից ներկայացնում են ներդրումներ հանրային կապիտալում, որն ապագայում կարող է օգտագործվել բանակցությունների և կայուն խաղաղության հասնելու համար անհրաժեշտ վստահության կառուցման, փոխզիջման ու հաշտեցման հասնելու համար։ Զեկույցում նշված կոնկրետ հաջողությունների համապատկերում սահմանվել են հետևյալ ընդհանուր դրույթները՝

- **Հաղորդակցման ուղիներ**. ծրագրերը հակամարտության բոլոր կողմերի միջև հաղորդակցման ուղիների ստեղծման ու պահպանման միակ եղանակն են։ Մի իրավիճակում, երբ հանրությունները լիովին մեկուսացված են միմյանցից, հակամարտության տարբեր կողմերի մարդկանց միջև փոխկապերը կարևորագույն դեր են խաղում ազգային քաղաքականության մակարդակով առաջ տարվող ազգայնամոլական հռետորաբանության արմատականացվող ազդեցության նվազեցման գործում։ Դա օգնել է դանդաղեցնելու հանրությունների միջև խորացված թշնամության զարգացումը։

- **Ոչ քաղաքական հարթակ.** խաղաղարար նախաձեռնությունների առաջարկած քաղաքացիական մասնակցության ձևաչափերը պաշտոնական ձևաչափերից դուրս մղված խմբերին բացառիկ հնարավորություն են տալիս սեփական ներդրումն ունենալու հակամարտության լուծման ապագա գործընթացի քննարկումներում: Տարբեր խմբեր ներառող այդ դաշտը երկխոսության հնարավորություն է տալիս հակամարտության մեջ գտնվող ժողովուրդներին, որոնք, ի վերջո, պիտի խաղաղ գոյակցության մեխանիզմներ գտնեն՝ գոյակցություն, որը հանդիսանում է կայուն և երկարատև կարգավորման հենքը:
- **Անհատի փոխակերպում.** խաղաղարար գործունեության կարևոր ձեռքբերումներից մեկը դրա մասնակիցների անձնական փոխակերպումն է: Ներազդման այս ոլորտը դժվար է որակապես արտահայտել, և այն հաճախ թերագնահատվում է: Այդուհանդերձ, այս գործընթացի երկարաժամկետ մասնակիցների մոտ ձևավորվում է մյուս կողմի առավել խորունկ ընկալում և նրա նկատմամբ առավել հանդուրժողականություն: Նրանք ավելի հաստատուն են դառնում միֆերի ու կարծրատիպերի ազդեցության նկատմամբ և ընդունում են փոխզիջման հնարավորությունը: Սակայն այս անձնական փոխակերպման առավելությունները չեն կարող ստացվել առիթից առիթ անցկացվող միջոցառումներին մասնակցելու արդյունքում, դրանք զարգացվում ու համախմբվում են անընդհատ, տևական աշխատանքի միջոցով:
- **Փոփոխությունների «հաղորդիչները».** ավելի քան 20 տարի խաղաղարար գործընթացները հանգեցնում են քաղաքացիական հասարակության առաջնորդների մի ամբողջ կոհորտայի ի հայտ գալուն՝ այն բանի հստակ ընկալմամբ, որ փոխվստահությունն ու փոխզիջումը խաղաղության հասնելու էական տարրերն են: Այս անձինք, ովքեր կարողացել են հարաբերություններ ստեղծել հակամարտության մյուս կողմում գտնվող մարդկանց հետ, տիրապետում են այլ կողմերի հայացքների ընկալմանը և երկխոսության համար առավելս բաց լինելուն էապես աջակցելու ներուժին: Խաղաղարարության նրանց փորձը, տեսականն ու շահագրգռվածությունը կարող են օգտագործվել խաղաղության գաղափարի առաջ մղման և նրանց հանրություններում փոփոխությունների արագացման համար:

Հայացք Բաքվից

Ներածություն

Հայ-ադրբեջանական լեռնայինղարաբաղյան հակամարտության կարգավորման պաշտոնական բանակցային գործընթացում այսօր առկա փակուղային իրավիճակը անցած 20 տարում (1992-2012թթ.) տարածաշրջանում կուտակած «ժողովրդական դիվանագիտության» ներուժի քննադատական վերլուծության սուր անհրաժեշտություն է թելադրում: Այդ իսկ նպատակով 2013 թվականի հունվարին Ադրբեջանում հարցում է անցկացվել քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչների (ՀԿ-ների ղեկավարներ, փորձագետներ, լրագրողներ, երիտասարդներ և այլք) շրջանում, ովքեր անցած տարիներին մասնակցել են ամենատարբեր խաղաղարար նախաձեռնությունների իրականացմանը: Սույն հաշվետվությունը կազմվել է նշյալ հարցման հիման վրա, որն անցկացվել է երկու ֆոկուս խմբերի, ինչպես նաև մի շարք փորձագետների հետ բանավոր ու գրավոր հարցազրույցների միջոցով: Հաշվետվությունը ներկայացված է այսպես կոչված «Չատեմ հաուս» ձևաչափով, որը ենթադրում է կարծիքների մեջբերում՝ առանց դրանց հեղինակների մատնանշման:

Հարցման արդյունքով՝

- ներկայացվել է խաղաղարար նախաձեռնությունների մոտավոր ժամանակագրությունը և համառոտ տեսությունը,
- դիտարկվել են խաղաղարար նախաձեռնությունների հիմնական մասնակիցներն ու թեմաները,
- վերլուծվել է խաղաղարար նախաձեռնությունների ազդեցությունը իրական քաղաքական գործընթացների վրա,
- ներգրավված շահառուների մոտ գնահատվել է հակամարտության նկատմամբ վերաբերմունքի վրա խաղաղարար նախաձեռնությունների ազդեցությունը,
- դիտարկվել են խաղաղարար նախաձեռնությունների իրականացման արդյունավետության վրա ազդող գործոնները,
- տրվել են մի շարք առաջարկություններ ու հանձնարարականներ, որոնք կարող են ուժեղացնել խաղաղարար նախաձեռնությունների գործունակությունը:

Հարցումը ևս մի անգամ հաստատել է իրականացված խաղաղարար նախաձեռնությունների համակարգման և դրանց արդյունքների վերլուծության անհրաժեշտությունը: Ինչպես արդարացիորեն նկատել է հարցման մասնակիցներից մեկը՝ առանց նման մոտեցման այն կարծիքն է ստեղծվում, որ «*ամեն անգամ մենք սկսում ենք զրոյից և նկատի չենք ունենում ուրիշների կատարած աշխատանքը*»:

Խաղաղարար նախաձեռնությունների համառոտ տեսություն

Հարցման մասնակիցները հայ-ադրբեջանական լեռնայինղարաբաղյան հակամարտության կարգավորման ոլորտում անցած 20 տարում (1992-2012թթ.) առկա խաղաղարար գործընթացը պայմանականորեն բաժանել են մի քանի փուլերի:

Առաջին փուլ՝ 1992-1994թթ.

Այս փուլում, այն է՝ ակտիվ ռազմական գործողությունների ժամանակաշրջանում, ադրբեջանական հանրության մտավորականության առաջատար ներկայացուցիչները հիմնականում ձգտում էին լարվածության աճ թույլ չտալ :

1993 թվականին սկսվել է հայ-ադրբեջանական «Բեն-Լոմոնդյան խաղաղ գործընթաց» կոչված նախաձեռնության իրականացումը: Հրադադարի ռեժիմի ստորագրումից հետո (1994թ. մայիս) Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի ադրբեջանական և հայաստանյան կոմիտեները կանանց և երիտասարդների խմբերի մասնակցությամբ երկու հանդիպում են անցկացրել սահմանամերձ շրջաններում՝ Իջևանում (Հայաստան) և Ղազախում (Ադրբեջան):

Երկրորդ փուլ՝ 1994-2000թթ.

Այս փուլում միջազգային կազմակերպություններն ու ՀԿ-ները, ինչպես նաև դոնորները սկսեցին խաղաղարար ծրագրեր իրականացնել Ադրբեջանում՝ տեղական ՀԿ-ների, փորձագիտական հանրության, ուսանողների, լրագրողների և առաջնորդ կանանց ներգրավմամբ։

- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Ադրբեջանի ազգային կոմիտեն «Հելսինկյան նախաձեռնություն-92» (Լեռնային Ղարաբաղ) կազմակերպության հետ միասին աշխատանք է տարել ռազմագերիների ու պատանդների որոնման ուղղությամբ:
- Շարունակվել է «Բեն-Լոմոնդյան խաղաղ գործընթացը» (1993-1998թթ.):
- 1994-96թթ. Խաղաղության ազգային հիմնադրամի (ԱՄՆ) «Կանայք հանուն խաղաղության և ժողովրդավարության Հարավային Կովկասում» նախաձեռնության շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել Հարավային Կովկասի երկրների կանանց ներկայացուցիչների միջև։
- Մերիլենդի համալսարանի (ԱՄՆ) Միջազգային զարգացման և հակամարտությունների կարգավորման կենտրոնը (CIDCM) Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ակադեմիական շրջանակների ներկայացուցիչների հետ միասին իրականացրել է «Գործընկերներ հակամարտությունում՝ Անդրկովկասում խաղաղության կամուրջների կառուցում» ծրագրի առաջին փուլը (1995թ. օգոստոս-դեկտեմբեր), ծրագիր, որը շարունակվել է մինչև 1999 թվականը։
- 1997 և 1998 թվականներին՝ Բաց հասարակության ինստիտուտ՝ Աջակցության հիմնադրամ-Ադրբեջան կազմակերպության ֆինանսական և Խաղաղության ազգային հիմնադրամի (ԱՄՆ) կազմակերպական աջակցությամբ Թբիլիսիի պետական համալսարանում մեկշաբաթյա դասընթացներ են անցկացվել «Հակամարտությունների կանխարգելման և կարգավորման առաջնորդություն» թեմայով՝ Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ուսանողների համար։ Ծրագիրն իրականացվել է «Կանայք հանուն խաղաղության և ժողովրդավարության Հարավային Կովկասում» տարածաշրջանային կազմակերպության ադրբեջանական ստորաբաժանման կողմից։ Ընդհանուր առմամբ այդ տարիների ընթացքում շուրջ 120 ուսանողներ մասնակցել են նշված դասընթացներին։
- 1997-1999 թվականներին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի ադրբեջանական, հայաստանյան և վրաստանյան կոմիտեները ամառային և ձմեռային դպրոցներ են կազմակերպել երիտասարդների համար։
- 1997-2000 թվականներին Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի (FDFA) հովանավորությամբ իրականացված Կովկասի ԶԼՄ-ների աջակցության եռամյա ծրագրի շրջանակներում կազմակերպվել են ադրբեջանցի լրագրողների այցելություններ Հայաստան (1997թ.) և Լեռնային Ղարաբաղ (1998թ.), ինչպես նաև հայ լրագրողների այցելություն Ադրբեջան (1999թ.)։
- 2000թ. փետրվարին, մայիսին և հունիսին Կրթական զարգացման ակադեմիան (AED) հակամարտությունների լուծման և կանանց առաջնորդության հարցերին նվիրված երեք սեմինար է անցկացրել ՝ Բակուրիանիում (Վրաստան), Ծաղկաձորում (Հայաստան) և Բաքվում (Ադրբեջան)։ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորած սեմինարներին մասնակցել են 20-ական կին ներկայացուցիչ Ադրբեջանից, Հայաստանից ու Վրաստանից։

Երրորդ փուլ՝ 2000-2007թթ.

Երրորդ փուլը բնութագրվում է ռազմագերիների ու պատանդների որոնման ոլորտում տարվող աշխատանքների ուժեղացմանն ուղղված նախաձեռնություններով, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ու ՀԿ-ների ներգրավմամբ տարածաշրջանային երկարաժամկետ խաղաղարար նախաձեռնությունների իրականացման մեկնարկով։

- 2000-2007թթ. շարունակվել են ռազմագերիների ու պատանդների որոնմանն ուղղված ակտիվ գործողությունները, որոնք ձեռնարկվել են Գերմանիայում ստեղծված Ռազմագերիների ու պատանդների ազատման և անհայտ կորածների որոնման հարցերով միջազգային խմբի կողմից։ Այդ խմբի համակարգողները գործում էին Բաքվում, Երևանում և Խանքենդիում (Ստեփանակերտ)։ Այդ ժամանակաշրջանում իրականացվել են համակարգողների փոխայցելություններ։
- 2001-2006թթ. Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում իրականացվել է ՄԱԿ-ի կանանց հիմնադրամի (ՅՈՒՆԻՖԵՄ) «Կանայք հանուն հակամարտությունների կանխարգելման և խաղաղության ստեղծման Հարավային Կովկասում» անվանմամբ տարածաշրջանային ծրագիրը։ Այդ ծրագրի շրջանակներում 2002 թվականին Ադրբեջանում ստեղծվել է կանանց «Կոալիցիա 1325»-ը, որի անդամները ակտիվորեն մասնակցել են երկրի մասշտաբով անցկացված բազմաթիվ խաղաղարար նախաձեռնությունների, ինչպես նաև ՅՈՒՆԻՖԵՄ-ի կողմից 2003 թվականին նախաձեռնած «Կանայք հանուն խաղաղության» տարածաշրջանային կոալիցիայի աշխատանքներին։

- 2001 թվականին սկսվել է հայ-ադրբեջանական լեռնայինղարաբաղյան հակամարտության կարգավորման գծով Դարտմուտյան համաժողովը, որը շարունակվել է 6 տարի և որի ընթացքում անցկացվել է 11 հանդիպում (2001-2006թթ.)։
- Այդ ժամանակահատվածում սկսվել է Մեծ Բրիտանիայի կողմից հովանավորված «Կոնսորցիումի նախաձեռնություն» ծրագիրը (2003-2009), որը նպատակաուղղված էր հայ-ադրբեջանական լեռնայինղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծումը սատարող բարենպաստ միջավայրի ստեղծմանը։ Ծրագիրն իրականացվել է կոալիցիայով, որի մեջ մտել են ամերիկյան «Catholic Relief Services» (CRS) և բրիտանական երեք ոչ կառավարական կազմակերպություններ՝ «Հաշտության ռեսուրսներ» (CR), «Միջազգային ահազանգ» (IA) և ԼԻՆԿՍ («London Information Network on Conflicts and Statebuilding»)։ Այս կազմակերպությունները տարածաշրջանի իրենց գործընկերների հետ միասին մեծ աշխատանք են տարել խաղաղարարության մասին բնակչության իրազեկվածության բարձրացման ուղղությամբ։ Աշխատելով երիտասարդության, կին առաջնորդների, տարբեր ՀԿ-ների, փորձագիտական շրջանակների ու խորհրդարանականների հետ, սույն ծրագիրը նպաստել է հակամարտության կողմերի միջև փոխըմբռնմանը և վստահության ստեղծմանը։
- 2006 թվականին Բաքվում, Երևանում և Խանքենդիում (Ստեփանակերտ) «Միջազգային ահազանգ» (International Alert) կազմակերպության ֆինանսական աջակցությամբ ստեղծվել են հակամարտությունների փոխակերպման ռեսուրս-կենտրոններ։

Չորրորդ փուլ՝ 2007-2013թթ.

Այս փուլը տարբերվում է նրանով, որ 2007 թվականից ի վեր մտավորականության ու պաշտոնական շրջանակների ներկայացուցիչները հնարավորություն ստացան համատեղ մասնակցելու խաղաղարար նախաձեռնություններին։ Այդ ժամանակաշրջանում սկսեց աշխատել նաև Եվրոպական Միության կողմից հովանավորվող «Եվրոպական գործընկերություն հանուն ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման» (EPNK) տարածաշրջանային երկարաժամկետ մեծ ծրագիրը։

- 2007 թվականի հուլիսին, ՌԴ-ում Ադրբեջանի ու Հայաստանի դեսպանների նախաձեռնությամբ, Հայաստանի ու Ադրբեջանի մտավորականության ներկայացուցիչներն այցելեցին Լեռնային Ղարաբաղ, Հայաստան ու Ադրբեջան։ Այցերի շրջանակներում պատվիրակությունը հանդիպել է Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին։
- 2009 թվականի հուլիսին իրականացվել է Ադրբեջանի ու Հայաստանի դեսպանների մասնակցությամբ պատվիրակության հերթական այցելությունը Լեռնային Ղարաբաղ, Հայաստան ու Ադրբեջան՝ դարձյալ պետությունների ղեկավարների հետ հանդիպումներով։
- 2010 թվականի ապրիլին առաջին անգամ կայացավ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի այցը Ադրբեջան՝ մասնակցելու աշխարհի հոգևոր առաջնորդների Բաքվի գագաթաժողովին։
- 2011 թվականի նոյեմբերին Կովկասի մահմեդականների վարչության ղեկավար Ալլահշուքյուր Փաշազադեն մասնակցեց ԱՊՀ միջեկեղեցական խորհրդի՝ Երևանում անցկացված նիստին։ Այցի ժամանակ նա հանդիպեց նաև Հայաստանի նախագահի հետ։Ադրբեջանցի պատգամավորները մասնակցել են Եվրանեստ խորհրդարանական ասամբլեայի սոցիալական, կրթական, մշակութային և քաղաքացիական հասարակության հարցերով մշտական հանձնաժողովի նիստին, որն անցկացվել է 2012 թվականի փետրվարին Երևանում։ Իրենց հերթին, հայ պատգամավորները մասնակցել են Եվրանեստ խորհրդարանական ասամբլեայի երկրորդ լիագումար նիստին, որը կայացել է 2012 թվականի ապրիլին Բաքվում։
- 2010 թվականին սկսվեց «Եվրոպական գործընկերություն հանուն ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման» (EPNK) երկարաժամկետ ծրագրի առաջին փուլը, որն ավարտվեց 2011 թվականին։ Ծրագիրն իրականացվել է «Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» (CMI) ֆիննական կազմակերպության, շվեդական «Kvinna till Kvinna» կազմակերպության և բրիտանական երեք ոչ կառավարական կազմակերպությունների՝ CR, «International Alert» и LINKS, ջանքերով։ Այդ ծրագրի երկրորդ փուլն սկսվել է 2012 թվականին և շարունակվում է վերոնշյալ կազմակերպությունների մասնակցությամբ։

Խաղաղարար նախաձեռնությունների հիմնական մասնակիցները

Ադրբեջանական կողմից խաղաղարար նախաձեռնություններում առավել լայն ներկայացված են եղել քաղաքացիական հասարակության առաջնորդներն ի դեմս ՀԿ-ների, անկախ փորձագետների, լրագրողների, ուսանողական երիտասարդության, կանանց կազմակերպությունների ներկայացուցիչների, ավելի նվազ չափով՝ փախստականների և հարկադիր տեղաշարժվածների ու ստեղծագործական

մտավորականության ներկայացուցիչները։ Միաժամանակ նշվել է, որ զոհվածների ընտանիքները, գյուղաբնակները, սահմանամերձ շրջանների բնակիչները և քաղաքական կուսակցությունների անդամները սոսկ մասնակիորեն են ներգրավվել նման ծրագրերում, իսկ ինչ վերաբերվում է ձեռներեցներին, պետական ծառայողներին, ՏԻՄ ներկայացուցիչներին, ինչպես նաև այնպիսի մասնագիտությունների ներկայացուցիչներին, ինչպիսիք են ուսուցիչները, բժիշկները և այլք, ապա նրանք բավարար չափով չեն ներգրավվել այդ նախաձեռնություններում։ Հարցման մասնակիցները կարծում են, որ թեև քաղաքական շրջանակների ներկայացուցիչները, հնարավոր է, նույնպես հանդիպում են տարբեր համաժողովներում ու սեմինարներում, այնուամենայնիվ, այդ հանդիպումները դժվար է կառուցողական համարել, քանի որ «*քաղաքական գործիչները ձգտում են ավելի շատ մեղադրել միմյանց*»։

Ընդսմին, հարցման մասնակիցներից մեկը կարծում է, որ հանրության գրեթե բոլոր շերտերն ու խմբերը մասնակցել են խաղաղարար նախաձեռնություններին, իսկ իրական արդյունքների բացակայությունն, ըստ նրա, բացատրվում է նրանով, որ «*ի տարբերություն պատերազմի ռեսուրսների, խաղաղության ռեսուրսներն ուղղակի չնչին են*»։

Հակադիր կողմից ադրբեջանցի մասնակիցների գործընկերներն առավել հաճախ եղել են փորձագետներ, լրագրողներ, երիտասարդության ու մտավորականության ներկայացուցիչներ ու ոչ կառավարական կազմակերպություններ, կանանց կազմակերպությունների ներկայացուցիչներ, պատգամավորներ Հայաստանից և Լեռնային Ղարաբաղի հայ համայնքից։

Խաղաղարար նախաձեռնությունների հիմնական թեմաները

Խաղաղարար նախաձեռնությունները հիմնականում ուղղված են եղել հակամարտությանն առնչված հարցերի լայն շրջանակի՝ հետևյալ ոլորտներում.

- ռազմագերիների և պատանդների, զոհվածների դիակների փոխանակման նախաձեռնություններ, լրագրողական կազմակերպությունների ու առանձին լրագրողների նախաձեռնություններ,
- հակամարտության և դրա առանձին բաղադրիչների անաչառ լուսաբանման, տեղեկատվության մատչելիության բարելավման, խոսքի ազատության պաշտպանության, լրագրողների մասնագիտական վարպետության բարձրացման, ՁԼՄ-ների ոլորտում օրենսդրությունների ներդաշնակեցման ուղղությամբ,
- գոյություն ունեցող հակամարտությունների ու դրանց կարգավորման ուղիների ուսումնասիրմանը, հետհակամարտային գոյակցության հնարավորությունների հետազոտությանն ու վերլուծությանը նպատակաուղղված նախաձեռնություններ,
- պաշտոնական բանակցային գործընթացին զուգահեռ խաղաղ բանակցությունների կազմակերպման նախաձեռնություններ,
- խաղաղարար գործընթացում կանանց և երիտասարդության դերի ուժեղացմանը միտված նախաձեռնություններ,
- փառատոների ու համատեղ ֆիլմերի ու տեսանյութերի ցուցադրությունների կազմակերպման նախաձեռնություններ,
- կողմերի միջև վստահության հաստատմանը և փոխըմբռնման որոնմանը միտված նախաձեռնություններ. քաղաքացիական հասարակության երկխոսության կազմակերպում, նրա ներգրավում խաղաղ կարգավորման որոնման, կողմերի միջև վստահության ավելացման առաջարկությունների գործընթացում,
- հումանիտար խնդիրների (մասնավորապես, ընտանիքների անդամների որոնում և կապերի վերականգնում, խառն ամուսնությունների խնդրի ուսումնասիրում) լուծմանն ուղղված նախաձեռնություններ, փախստականների ու հարկադիր տեղաշարժվածների հարցի քննարկում և այլն:

Խաղաղարար նախաձեռնությունների գնահատում

Հարցման մասնակիցների կարծիքով՝ խաղաղարար նախաձեռնություններում ամենաարդյունավետը նրանք էին, որոնք համապատասխանել են երկու հանրությունների «*սոցիալական պատվերին*» և առավել արդարացվածներն էին դրանց իրականացումից ակնկալվող դրական արդյունքների տեսանկյունից։ Այդօրինակ ծրագրերի թվին կարելի է դասել ռազմագերիների, պատանդների ու անհայտ կորածների

փոխանակման նախաձեռնությունները, զոհվածների աճյունների փոխանակման նախաձեռնությունները, հասարակական կարծիքի ձևավորման աշխատանքին և տեղեկատվության փոխանակմանը (մամուլի ակումբների ստեղծմանը) միտված որոշ լրագրողական նախաձեռնություններ։

Գիտնականների ու հասարակական գործիչների միջև պարբերաբար անցկացված հանդիպումները նույնպես օգնել են հակամարտության կողմերի ներկայացուցիչների միջև փոխըմբռնման աստիճանի աճին։ Նման փոխկապերի արդյունքում ծնվել են համատեղ նախագծերի իրականացման գաղափարներ, ձևավորվել են մարդկային լավ հարաբերություններ։ Մասնավորապես, որպես օրինակ կարելի է բերել «Ղարաբաղյան հակամարտություն. լուծման տարբերակներ» վերտառությամբ համատեղ գիրքը, որի հեղինակներն են պրոֆեսոր Ալի Աբասովը և նրա հայ գործընկեր Հարություն Խաչատրյանը։

Հարցման մասնակիցները գտնում են, որ մտավորականության և լրագրողների ներկայացուցիչների միջև երկխոսության և համատեղ այցելությունների կազմակերպման առումով որոշակի արդյունքներ են ձեռքբերվել: Մի ինչ-որ պահի կողմերին հաջողվել է ձերբազատվել հեռու և մոտիկ պատմական իրադարձությունների լծից ու միմյանց վերաբերվել ազատ ու հանգիստ։ Սակայն վստահությունն ամրապնդելու և հակամարտության խաղաղ կարգավորումն առաջ մղելու համար արդյունավետ առաջարկությունների մշակման ոլորտում առաջընթացն աննշան էր։

Մասնակիցներն այն կարծիքն են հայտնել, որ նախաձեռնություններն անհաջող են եղել այնչափ, որչափ դրանք հավակնում էին ղարաբաղյան հիմնախնդրի լուծման առաջարկների դերին։ Հարցման մասնակիցներից մեկը նույնիսկ գտնում է, որ բոլոր նախագծերն էլ անհաջող էին, քանի որ հակամարտությունը շարունակվում է չկարգավորված մնալ։ Միևնույն ժամանակ, որպես անհաջող ծրագրի օրինակ ներկայացվել է 2000-ականների սկզբներին իրականացված, բայց գործընկերներից մեկի կողմից պարտավորությունների չկատարման պատճառով դադարեցված հայ-վրացա-ադրբեջանական նախագիծը։

Հարկ է ընդունել, որ իրական քաղաքականության վրա խաղաղարար նախաձեռնությունների ազդեցության գնահատման մեջ առկա է կարծիքների որոշակի անհամապատասխանություն։

Որոշ փորձագետներ կարծիք են հայտնել այն մասին, որ մինչև 2003 թվականը «ժողովրդական դիվանագիտության» շրջանակներում խաղաղարար գործընթացի դրական միտում է դիտվել: Մասնավորապես, հաճախացել են ադրբեջանցի լրագրողների այցելությունները Հայաստան, և հակառակը՝ իրականացվել են ադրբեջանցի և հայաստանցի լրագրողների համատեղ այցելություններ Լեռնային Ղարաբաղ, և դրանք սատարվել են կառավարության կողմից։ Բայց 2003 թվականից իրավիճակը փոխվել է, և քաղաքականությունը դարձել է մեդիա ոլորտում նախաձեռնություններին զսպող լուրջ գործոն։

Այդուհանդերձ, հարցվածների մի մասը կարծում է, որ խաղաղարար նախաձեռնությունները որոշակի ազդեցություն են գործել քաղաքականության մակարդակի վրա, թեև քիչ չի եղել, որ դրանք բացասական արձագանք են գտել իշխանությունների ու արմատական տրամադրություններ ունեցող քաղաքական ուժերի մոտ։ Հակառակ դեպքում չէին լինի խաղաղարարների վրա «*իշխանությունների այդքան կատաղի հարձակումները*»՝ կարծում են նրանցից ոմանք։ Միևնույն ժամանակ, ինչպես նշել է հարցման մասնակիցներից մեկը, «*Արևմուտքը Ադրբեջանում տեսավ առողջ և խաղաղասեր մարդկանց*»։

Որպես նման ազդեցության օրինակ բերվել է «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք» հասարակական միավորման ստեղծման փաստը, ինչը հնարավոր է դարձել այն բանից հետո, երբ քաղաքացիական հասարակությունը բազմիցս առաջարկություններ է արել այդ կապակցությամբ։

Ադրբեջանական խորհրդարանի ընտրողների և Խանքենդիի (Ստեփանակերտի) թ.125 ընտրատեղամասի բացման մասին հարցը նույնպես շոշափվել է քաղաքացիական հասարակության առաջարկություններում, և իշխանությունները հետագայում համապատասխան որոշում են ընդունել այդ հարցի կապակցությամբ։ Ղարաբաղյան հիմնախնդրի քննարկումներում Ղարաբաղի ազատագրման կազմակերպության ներգրավումը, ինչպես նաև այդ հարցով ամենամյա բանավեճերի անցկացումը, որոնց արդյունքում հրապարակվել է «Ղարաբաղ. երեկ, այսօր, վաղը» վերտառությամբ գրքերի շարք, նույնպես խաղաղարար գործընթացի արդյունք է։

Մյուս կողմից էլ ընդգծվել է, որ անցած տարիներին, մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների բերումով, նպատակաուղղված աշխատանք չի տարվել Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական և հայկական համայնքների ներկայացուցիչների միջև փոխկապերի հաստատման ուղղությամբ, ինչն, իր

հերթին, խաղաղարար գործընթացի լուրջ բացթողումներից մեկն է։ Լեռնային Ղարաբաղից հարկադիր տեղաշարժված ադրբեջանցիների վերադարձը հայրենի վայրեր, ինչպես նաև տարածաշրջանում հայկական էթնոսի ներկայացուցիչների հետ խաղաղ գոյակցության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը հակամարտության խաղաղ կարգավորման ճանապարհին առկա առաջնային խնդիրներից է։

«Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք» հասարակական միավորումը կարող է հետագայում նպաստել հակամարտությունից անմիջականորեն տուժած մարդկանց միջև կապերի ու հանդիպումների ակտիվացմանը, կարծում են փորձագետները։

Հարցման ընթացքում նաև այն կարծիքն է հայտնվել, որ նախաձեռնությունները չնչին ազդեցություն են ունեցել իրական քաղաքական գործընթացների վրա, իսկ մի քանի մասնակիցներ նույնիսկ բացառել են քաղաքականության մակարդակի վրա խաղաղարար նախաձեռնությունների ազդեցության փաստը։ Ինչպես կարծում է հարցման մասնակիցներից մեկը, դա կապված է այն բանի հետ, որ «*նախ՝ քաղաքական գործիչները բանակցությունների իմիտացիա են անում, երկրորդ՝ մեր երկրներում քաղաքացիական հասարակությունը կա՛մ բացակայում է, կա՛մ էլ շատ թույլ է։ Իսկ դա նշանակում է, որ իշխանությունը մտադիր չէ հաշվի նստել հանրության հետ*»։

Նաև նշվել է, որ երբ բանակցություններում ծագում է խաղաղ կարգավորման գործընթացում ճեղքման հնարավորություն, քաղաքացիական հատվածի ծրագրերի ու նախաձեռնությունների նկատմամբ վերաբերմունքը բարելավվում է, իսկ երբ բանակցություններում հերթական փակուղին է լինում, և ուժեղանում է դիմակայությունը, խաղաղարար ծրագրերի նկատմամբ վերաբերմունքը կտրուկ վատթարանում է։

Կարելի է եզրահանգել, որ խոսելով դրական ազդեցության բացակայության մասին՝ հարցերին պատասխանողները ելնում էին այն ակնհայտ փաստից, որ ռազմական հակամարտությունը շարունակվում է, պահպանվում է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը և հաջողություն չկա պաշտոնական խաղաղ բանակցություններում։ Նաև այն կարծիքն է հայտնվել, որ քաղաքականության մակարդակի վրա խաղաղարար նախաձեռնությունների ազդեցության բացակայության պատճառներից մեկը խաղաղարար գործընթացում ներգրավված ՀԿ-ների ոչ բավարար «կշիռն» է։ Նրանց ֆինանսական ռեսուրսները և կազմակերպա-տեխնիկական բազան անբավարար են, ինչպես նաև շատ թույլ է որոշում ընդունողների ու խաղաղարար նախաձեռնությունների մասնակիցների միջև կապը։

Միաժամանակ ֆոկուս խմբերի մասնակիցները նշել են, որ 2007 թվականից հետո սկսվել է խաղաղարար ծրագրերի իրականացման նոր փուլ՝ պատգամավորների, դեսպանների ու կրոնական գործիչների մասնակցությամբ, որոնք մինչ այդ քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին հավանություն չէին տալիս։ Այդ մարդկանց, ինչպես նաև մտավորականության առաջատար ներկայացուցիչներին կարգավորման գործընթացում ներգրավումը գնահատվում է որպես իշխանությունների կողմից խաղաղարար նախաձեռնություններում շահագրգռվածության ցուցադրում։ Մասնակիցների կարծիքով, իշխանությունների դիրքորոշման փոփոխման վրա լուրջ ազդեցություն է գործել մինչ այդ իրականացված խաղաղարար ծրագրերի փորձը։

Հարցման մասնակիցները նաև նշել են, որ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների վերջին հանդիպումներում ընդգծվել է հումանիտար կապերի զարգացման անհրաժեշտությունը՝ հենվելով երկխոսության արդեն իսկ մշակված ձևաչափի վրա։ Նախագահների ու արտգործնախարարների հետ հանդիպումների ժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարություններում նույնպես հույս է հայտնվել, որ խաղաղարար գործընթացը կշարունակվի և այդ գործընթացում կներգրավվեն հանրության ակտիվ ներկայացուցիչները։

Հարցման ժամանակ բացահայտվել է, որ խաղաղարար նախաձեռնությունները ազդեցություն են գործել ներգրավված շահառուների խմբերի՝ հակամարտության նկատմամբ վերաբերմունքի վրա։ Դեպքեր են եղել, երբ նման ծրագրի մասնակիցը (շահառուն) հանդիպումից առաջ նույնիսկ չէր պատկերացնում հակադիր կողմի գործընկերների հետ համատեղ աշխատանքի որևէ հնարավորություն։ Բայց ժամանակի ընթացքում նրանց մոտ ինչ-որ բան ստացվել է, և նրանց հաջողվել է առնվազը վստահություն ստեղծել անձնական մակարդակով։ Օրինակ, լրագրողներն ավելի հանդուրժող ու մտախոհ էին դառնում, նրանց մոտ հայտնվում էին տեղեկատվության աղբյուրներ մյուս կողմում, նրանք կարողանում էին սովորել աշխատելու մի թիմում, որտեղ նաև հակադիր կողմի ներկայացուցիչներն են, ինչպես նաև արհեստավարժորեն լուսաբանել հակամարտությունը։

Հարցվածների մի մասը կարծում է, որ նրանք, ովքեր անմիջականորեն ներգրավված են եղել խաղաղարար գործընթացում, սկսել են ավելի անաչառ վերաբերվել ինչպես բուն հակամարտությանը, այնպես էլ դրա առանձին հայեցակետերին: Նրանք շատ են տարբերվում քաղաքացիների մեծամասնությունից, բոլոր նրանցից, ովքեր շարունակում են մնալ պաշտոնական քարոզչության ձեռնածությունների օբյեկտ: Առաջին խումբն ավելի հանդուրժող ու զգայուն է հակամարտության բազմակողմանի գնահատականների նկատմամբ, նրանց մոտ փլուզվում են միֆերն ու կարծրատիպերը, նվազում է զգացմունքային բաղկացուցիչը, մեծանում է կառուցողականությունը և փոխզիջումների անհրաժեշտության ընկալումը: Օրինակ, «Ինտերնյուս-Ադրբեջան» և «Ինտերնյուս-Հայաստան» կազմակերպությունների նկարահանած ֆիլմերը հակամարտության երկու կողմերի երիտասարդությանը թույլ են տվել ձերբազատվելու «թշնամու» կարծրատիպից:

Հանուն քաղաքացիական հասարակության կանանց ալյանսի (Ադրբեջան) և Խաղաղարար նախաձեռնությունների կենտրոնի (Հայաստան) համատեղ դատավարություններն ու լսումները երկու կողմերի հասարակայնությանը ծանոթացրել են հետաքրքիր ու յուրօրինակ խաղաղարար նախաձեռնություններին: Այդ նախաձեռնությունների արդյունքում հայտնվեցին հայերի ու ադրբեջանցիների մասնակցությամբ Վրաստանում անցկացված, այսպես կոչված, Թեկալիի լսումները:

Սակայն հարցման մասնակիցներից մեկն այն կարծիքն է հայտնել, որ տևական դադարի դեպքում հակամարտության նկատմամբ շահառուների կարծիքները կարող են մերձենալ նրանց կարծիքներին, ովքեր նախկինում չեն ներգրավվել այդ գործընթացում: Այսպիսով, ըստ հարցման մասնակցի, խաղաղարար գործունեությունը զսպում է հանրության չափից դուրս ագրեսիվությունը:

Խաղաղարար նախաձեռնությունների իրականացման արդյունավետության վրա ազդող գործոնները

Ակնհայտ է, որ հայ-ադրբեջանական լեռնայինղարաբաղյան հակամարտության կարգավորման համապատկերում «ժողովրդական դիվանագիտության» հետագա ներուժի օգտագործման համար առավել կարևոր է խաղաղարար նախաձեռնությունների իրականացման արդյունավետության վրա ազդող գործոնների վերլուծությունը:

Հարցման մասնակիցների կարծիքով, խաղաղարար նախաձեռնությունների իրականացմանը նպաստող գործոններից կարելի է ընդգծել հետևյալը.

- յուրաքանչյուր մասնակցին հատուկ անձնական շահագրգռվածության գործոն (սկսած սովորական հետաքրքրությունից և վերջացրած պրոֆեսիոնալ կարիքների բավարարմամբ),
- միջազգային լուրջ կառույցների ներգրավվածություն,
- ձևաչափի ընդլայնում (օրինակ, դրանում թուրք գործընկերների ներգրավում),
- ձևերի բազմազանություն (թիմային ռեպորտաժներ, համատեղ ուսումնասիրություններ ու ֆիլմեր, արբանյակային մամուլի ասուլիսներ),
- պետական կազմակերպությունների աջակցություն (1997-2002 թվականներին),
- մասնակիցների նյութական շահագրգռվածություն,
- նոր աշխարհակարգի կառուցման ճանապարհին առկա խոչընդոտների հաղթահարման փորձ,
- մասնակիցների ցանկությունը՝ ինչ-որ ներդրում ունենալ հակամարտության լուծման գործում, և խաղաղարար ծրագրերում միջազգային կազմակերպությունների ու դոնորների շահագրգռվածությունը,
- փոխադարձ ու երկարաժամկետ շփումներ, միմյանց լսելու ունակություն և շփման ընդհանուր եզրերի հայտնաբերում,
- հմուտ փորձագետների առկայություն, համատեղ ապրելու դրական փորձի ու հիշողության կրողների գոյություն, այդ փորձի փոխանակման հնարավորություն,
- հակամարտության ճիշտ լուսաբանման՝ որոշ ԶԼՄ-ների պատրաստակամություն:

Հարցման մասնակիցների կարծիքով, խաղաղարար նախաձեռնությունների իրականացմանը խանգարել են հետևյալ գործոնները՝

- 2003 թվականից հետո այդ նախաձեռնությունները սատարելու՝ կառավարության մոտ ցանկության բացակայությունը,

- հաջող նախաձեռնությունների ֆինանսավորման կարճաժամկետությունը և անհետևողականությունը,
- բանակցային գործընթացում որևէ առաջընթացի ու բանակցությունների մասին տեղեկատվության բացակայությունը, ինչպես նաև անվստահություն ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության նկատմամբ,
- ներքին կարծրատիպերի առկայությունը,
- հանրության անդամների մեծամասնության կողմից խաղաղարարության, որպես իրական քաղաքականության սկզբունքի չընդունումը,
- հակամարտությունը երկարաձգելու և այն որպես իշխանության ռեսուրս օգտագործելու իշխանությունների ցանկությունը,
- տարածաշրջանում սեփական ազդեցությունն ուժեղացնելու նպատակով հակամարտությունն օգտագործելու՝ առաջատար տերությունների ձգտումը,
- տարբեր դոնորների մոտ խաղաղարարության մտածված ու համաձայնեցված ռազմավարության բացակայությունը,
- տեղական ՀԿ-ների՝ գիտելիքների ու փորձի նկատմամբ քամահրական վերաբերմունքը,
- տարաբնույթ դրդապատճառներ ունեցող մասնակիցների ընտրությունը (ինչպես պատկերավոր արտահայտվել է հարցման մասնակիցներից մեկը՝ «իռեդենտիստն ու խաղաղարարը չեն կարող նույն թիմում լինել»),
- երկու երկրների իշխանություններին էլ ձեռնտու ազգայնամոլական հռետորաբանությունը, որը պաշտպանվում է համապատասխան ԶԼՄ-ների կողմից,
- սահմաններին հրադադարի խախտման բազմաթիվ փաստերը և զինծառայողների սպանությունները, ռազմական ակտիվ գործողությունների ժամանակաշրջանի մասին հիշողությունները, Խոջալուի իրադարձությունները և այլն:

Կարծում ենք, որ խաղաղարար նախաձեռնություններին ինչպես նպաստող, այնպես էլ խանգարող գործոնների համեմատական վերլուծությունը կարող է թույլ տալ գործուն առաջարկներ մշակելու հայ-ադրբեջանական լեռնայինղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում քաղաքացիական հասարակության ներուժի օգտագործման համար:

Եզրահանգում

Հարցման ժամանակ մասնակիցները նաև հանդես են եկել առաջարկներով, որոնք, ըստ նրանց, կարող են ուժեղացնել խաղաղարար նախաձեռնությունների գործունությունը: Մասնավորապես, փորձագետներից մեկը գտնում է, որ խաղաղարար նախաձեռնությունները չպիտի սևեռվեն հայ-ադրբեջանական լեռնայինղարաբաղյան հակամարտության վրա: Ըստ նրա, խաղաղարար նախաձեռնությունների նպատակը պիտի լինի երեխաներին ու երիտասարդներին կրթել-լուսավորելը, քանի որ այսօր մի սերունդ է աճում, որը միմյանց մասին ոչինչ չգիտի և պատանեկան տարիներից գտնվում է «հակաադրբեջանական» և «հակահայկական» քարոզչության ազդեցության տակ: «*Մենք չպիտի ապրենք պատմական միֆերի, պատմական անուրջների ու հավաքական պատասխանատվության մամլիչի տակ*», գտնում է նա: Նա նաև գտնում է, որ խաղաղարար նախաձեռնությունների մեծ մասում հստակ նախանշված չեն իրական նպատակներ, և կասկածում է, որ խաղաղարար նախաձեռնությունները պիտի երկրորդեն քաղաքական գործիչներին: «*Ինքս այսպես եմ ձևակերպում՝ գլխավորը գոնե «զրոյական» մակարդակին հասնելն է, երբ առնվազն տեղական խմբերում չեն օգտագործում պատմական ու ազգայնական փաստարկներ: Մենք միմյանցից լավը կամ վատը չենք*»՝ հավելում է նա:

Մեկ այլ փորձագետ կարծում է, որ միայն հետևողական ու տևական աշխատանքի պարագայում կարելի է հասնել երիտասարդության աշխարհայացքի ավելի լուրջ փոխակերպման՝ աշխատանք, որը հնարավոր չէ իրականացնել տեղական դրամաշնորհների շրջանակներում:

Հարցման մեկ այլ մասնակից ևս այն կարծիքն է հայտնել, որ, ցավոք, խաղաղարար նախաձեռնությունները լինում են ոչ թե ինքնաբուխ, այլ միայն հիմնադրամների պահանջներին համապատասխան:

Ըստ նրա, հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ առայժմ չի իրականացվել Ադրբեջանի ու Հայաստանի քաղաքացիների ինքնուրույն համատեղ նախաձեռնություն: «*Ամեն անգամ երրորդ կողմ է պետք լինում, որը մեզ նստեցնում է բանակցությունների սեղանի շուրջ: Խնդիրը մեր քաղաքացիական տհաստության մեջ է*»՝ համոզված է նա:

Հարցման արդյունքների նախնական վերլուծության հիման վրա կարելի է հետևյալ առաջարկներն անել՝

- ուժեղացնել քաղաքացիական հասարակության ու պաշտոնական կառույցների, հայ-ադրբեջանական լեռնայինղարաբաղյան հակամարտության կարգավորմանն առնչվող հարցերով զբաղվող հետազոտական կենտրոնների միջև փոխգործակցությունն ու տեղեկատվության փոխանակումը,
- ուսումնասիրել այլ երկրներում նմանատիպ հակամարտությունների կարգավորման դրական խաղաղարար փորձը,
- համակողմանի խաղաղ պայմանագիր մշակելիս ծանոթանալ բանավեճերի անցկացման դրական փորձին, ինչպես նաև հակադիր կողմի կարծիքը հանրությանը ներկայացնելու արդյունավետ եղանակներին,
- լուծված հակամարտությունների օրինակով ուսումնասիրել ՁԼՄ-ների դերը կայուն խաղաղության ձեռքբերման գործում։

Երախտագիտության խոսքեր

Հեղինակները հետազոտությանը մասնակցելու համար շնորհակալություն են հայտնում Արզու Աբդուլաևային, Ալի Աբասովին, Սաջիդա Աբդուլվահաբովային, Քամալ Ալիին, Արիֆ Ալիևին, Մեհման Ալիևին, Ռաշադ Ալիևին, Զարդուշտ Ալիզադեին, Բախտիյար Ասլանովին, Զինադին Բաբաևին, Իրադա Բաղիրովային, Ռահման Բադալովին, Սահադաթ Բանանյարլիին, Իլգար Վելիզադեին, Նաիլյա Հաշիմովային, Համիդ Հիյասբեյլիին, Թաբիբ Հուսեյնովին, Սաբինա Հուսեյնովային, Նովելա Զաֆարովային, Թողրուլ Զուվարլիին, Քերիմ Քերիմլիին, Ասեֆ Կուլիևին, Նիյազի Մեհթիին, Էլիան Մեհթիևին, Ռասիմ Մուսաբեկովին, Շահին Ռզաևին, Ռենա Սաֆարալիևային, Էլիան Շահինօղլիին և Դիլյարա Էֆենդիևային։

Հայացք Երևանից

Ներածություն

Արդեն ավելի քան երկու տասնամյակ ամենատարբեր մակարդակներում և զանազան գործիչների կողմից իրականացվում են Լեռնային Ղարաբաղում հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված խաղաղարար նախաձեռնություններ՝ հակամարտության մեջ ներգրավված պետությունների քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Միանգամայն բնական է, որ պարբերաբար ինչպես հենց իրենց՝ այդ նախաձեռնությունների հեղինակների, մասնակիցների ու դոնորների, այնպես էլ հանրության ավելի լայն շերտերի մոտ հարց է ծագում, թե որքանո՞վ են արդյունավետ այդ նախաձեռնությունները։ Կամ էլ, այլ կերպ ասած, արժե, արդյո՞ք, նման նախաձեռնությունների համար այնքան ժամանակ, փող ու ջանք վատնել, որքան ծախսվում են դրանց վրա ինչպես հակամարտության մեջ ներգրավված երկրների ներսում, այնպես էլ դրանց սահմաններից դուրս։ Այդ հարցը հատկապես հրատապ է դառնում, երբ դրան հավելում ենք նաև այն հանգամանքը, որ այդ նախաձեռնություններին մասնակցությունը զուգակցվում է որոշակի ռիսկով։ Ճիշտ է, առայժմ նման նախաձեռնությունների մասնակիցների մեծամասնությունը շարունակում է հանգիստ ապրել ու աշխատել իրենց երկրներում, սակայն եղել են դեպքեր, երբ խաղաղարարությունն ավարտվել է խաղաղարարների համար բավականին տհաճ հետևանքներով, և եթե այսօր առկա միտումները պահպանվեն, ապա դժվար կլինի ասել, թե սեփական երկրում որքան հարմարավետ են իրենց զգալու խաղաղարար գործընթացների մասնակիցները մոտ ապագայում։

Եվ այսպես, սույն հետազոտության հիմնական հարցը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ արդարացված են արդյո՞ք այն խաղաղարար նախաձեռնությունները, որոնք նպատակ ունեն երկխոսության միջոցով քաղաքացիական հասարակության մակարդակում նպաստել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը։

Ինչ խոսք, սույն հետազոտության մասնակիցներից դժվար կլիներ ակնկալել բացասական պատասխան այդ հարցին, քանի որ համատեղ ուսումնասիրությանը նրանց մասնակցությունն ինքնին խոսում է այն մասին, որ նրանք հակված են դրական պատասխանի, այլապես նրանք պարզապես չէին մասնակցի նման նախաձեռնություններին։ Սակայն նույնիսկ դրական պատասխանի պարագայում ծագում են մի շարք ոչ պակաս բարդ հարցեր։ Խաղաղարար նախաձեռնությունների ո՞ր ձևաչափն է ավելի մոտ օպտիմալին։ Ո՞վ և ինչպե՞ս պիտի մասնակցի նման ծրագրերին։ Ո՞ր գործոններն են որոշում նման նախաձեռնությունների հաջող կամ անհաջող լինելը։ Ինչպե՞ս են խաղաղարար նախաձեռնություններն ազդում դրանց մասնակիցների վրա։

Ինչպե՞ս որոշել և չափել նման ծրագրերի հաջողվածությունը։ Սպառիչ պատասխանի չհավակնելով՝ սույն հետազոտության մեջ կանդրադառնանք այս և համանման այլ հարցերի։ Հետազոտությունն անցկացվել է ֆոկուս-խմբերի և խաղաղարար նախաձեռնությունների մասնակիցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, քաղաքագետների, կոնֆլիկտաբանների ու լրագրողների հետ փորձագիտական հարցազրույցների մեթոդով։

Ընդհանուր դիտողություններ. քաղաքացիական հասարակության և քաղաքական էլիտաների դերը հակամարտության կարգավորման գործում

Նախքան բուն խաղաղարար նախաձեռնություններին անդրադառնալը, հարկ է փորձել հասկանալ, թե որքանո՞վ կարող են քաղաքացիական հասարակության գործիչներին ներգրավող նախաձեռնություններն ազդել մեր երկրներում քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա։ Այս հարցի պատասխանը կախված է, մի կողմից, իշխանության կամ քաղաքական էլիտաների և, մյուս կողմից, ընդհանուր առմամբ հանրության, մասնավորապես՝ քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների բնույթից։

Հակամարտության լուծմանն ուղղված շատ նախաձեռնություններ խարսխված էին այն կասկածելի վարկածի վրա, որ հակամարտության մեջ ներգրավված պետություններում առկա է հակամարտության

լուծման շահագրգռվածություն քաղաքական էլիտաների մակարդակով։ Այս ենթադրությունն իր հերթին բխում է այն կանխավարկածից, ըստ որի կառավարող էլիտաներն իրենց գործողություններում ելնում են այդ պետությունների բնակչության լայն շերտերի շահերից, կամ, այլ կերպ ասած՝ կառավարող էլիտայի ու մյուս ազդեցիկ խմբերի շահերը համընկնում են հանրությունների կամ էլ ընդհանուր առմամբ երկրների շահերին։ Այս ենթադրությունը կարող էր աշխատել զարգացած ժողովրդավարություններում, որտեղ կառավարող էլիտան գտնվում է հանրության վերահսկողության տակ, ինչն իրականացվում է զսպումների ու հակակշիռների գործունակ համակարգի, իրապես գործող ընտրական համակարգի և ազատ ԶԼՄ-ների միջոցով։ Ինչ խոսք, զարգացած ժողովրդավարություններում ևս քաղաքական էլիտաներն ունեն իրենց սեփական օրակարգը, որը կարող է հակասել քաղաքացիների մեծամասնության շահերին։ Սակայն ժողովրդավարական պետությունում հանրային բարիքին հակասող որոշումներն ի վերջո կարող են անարդյունավետ թվալ հենց իրենց՝ էլիտաների տեսանկյունից, քանի որ հանրությունը հնարավորություն ունի «պատժելու էլիտայի այն ներկայացուցիչներին, որոնք նման որոշումներ են ընդունում»։

Հարավային Կովկասի իրողություններին որոշակի չափով ծանոթ դիտորդի համար ակնհայտ է, որ վերոնշյալը չի վերաբերում մեր տարածաշրջանին։ Չտրվենք այն հարցի քննարկմանը, թե որքանով են ժողովրդավարական Հարավային Կովկասի երկրների քաղաքական համակարգերը։ Միայն ասենք, որ քաղաքական էլիտաների կողմից որոշումների ընդունման վրա ազդելու հանրության հնարավորությունները խիստ սահմանափակ են։ Ընտրություններն այստեղ սովորաբար չեն հանգեցնում քաղաքական էլիտայի փոփոխմանը, իսկ ընդդիմության, մեդիայի և քաղաքացիական հասարակության կողմից քաղաքական էլիտայի ներկայացուցիչների քննադատությունը հաճախ սահմանափակվում է գրաքննության միջոցով (սովորաբար՝ ոչ պաշտոնական)։ Այն դեպքերում, երբ գրաքննությունը բացակայում է կամ թույլ է արտահայտված, միևնույն է՝ այդպիսի քննադատությունը, որպես կանոն, այն ազդեցությունը չունի, ինչպիսին այն ունենում է կայացած ժողովրդավարական պետություններում. քաղաքական էլիտաները հանգիստ կարող են իրենց թույլ տալ անտեսելու հանրությունում առկա կարծիքները։ Ուստի քաղաքական էլիտաները գործնականում ազատ են այն սահմանափակումներից ու վերահսկման մեխանիզմներից, որոնք իրենց կստիպեին հանրային բարօրությունը վեր դասել իրենց նեղ խմբակային շահերից։ Ասվածն, իհարկե, ամենևին էլ չի նշանակում, որ քաղաքական էլիտաների բոլոր ներկայացուցիչները գործում են բացառապես հանուն սեփական եսասիրական շահերի, բայց ակնհայտ է, որ էլիտայի վարքը ամբողջությամբ վերցրած թելադրված է այլ նկատառումներով, այլ ոչ թե հանրային շահերին ծառայությամբ։

Զարգացած ժողովրդավարական համակարգ ունեցող երկրներում գոյություն ունի էլիտաների ու հանրության մյուս շերտերի միջև որոշակի փոխզիջումային մոդել, որի շնորհիվ քաղաքական էլիտաները գոնե որոշ չափով հաշվի են նստում հանրության լայն շերտերի պահանջմունքների հետ։ Մեր երկրներում ոչ միայն հանրության կամքից քաղաքական էլիտայի կախվածության աստիճանն է ոչ բարձր, այլև իրավիճակն ինքնին բարդանում է նրանով, որ առկա է քաղաքական էլիտաների կախվածություն արտաքին ուժերից, որոնք ամենևին էլ ոչ միշտ են շահագրգռված հակամարտության լուծմամբ։ Քանի որ մեր երկրների քաղաքական առաջնորդները, որպես կանոն, իշխանության են գալիս կամ, ավելի շուտ, իշխանությունը պահում են ընտրությունների միջոցով, որոնք, մեղմ ասած, չեն համապատասխանում զարգացած ժողովրդավարության չափանիշներին, նրանք միշտ չէ, որ կարող են ակնկալել հանրության վստահությունն ու աջակցությունը, քանի որ նրանց լեգիտիմությունը վիճարկվում է ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

Ահա թե ինչու որոշումներ ընդունելիս քաղաքական էլիտաները զգալի չափով կախված են տարբեր արտաքին ուժերից, ինչպիսին են գլոբալ կամ տարածաշրջանային տերությունները, վերազգային կորպորացիաները, միջազգային քրեական ցանցերը և այլն։ Արտաքին ուժերից կախվածությունն ուժեղանում է այն պատճառով, որ մեր երկրների քաղաքական էլիտաների ներկայացուցիչները հաճախ խոցելի են իրենց բիզնես-գործունեությանն առնչվող ճնշման ամենատարբեր եղանակների համար (կոմպրոմատ, բանկային հաշիվներ, անշարժ գույք արտերկրում և այլն)։ Նրանցից շատերն ապահովված մարդիկ են, որոնց հարստությունը սովորաբար ձեռք է բերվում այնքան էլ ոչ օրինական եղանակներով, ընդ որում, որպես կանոն, այդ հարստությունները դուրս են բերվում երկրից ու ներդրվում արտասահմանում։ Եթե սրան հավելենք, որ չի կարելի բացառել մեր երկրներում արտասահմանյան հատուկ ծառայությունների ճյուղավորված գործակալական ցանցի առկայությունը, այդ թվում՝ քաղաքական էլիտաների ներկայացուցիչների շրջանում, ապա պարզ կդառնա, թե մեր երկրների քաղաքական էլիտաները որչափ են ենթակա դրսի ազդեցությանը։ Տարակուսելի չէ, որ հաճախ կառավարող էլիտաները որոշումներ ընդունելիս առաջնորդվում են ոչ այնքան սեփական երկրների երկարատև շահերով, որքան ելնելով արտասահմանյան ազդեցիկ դերակատարների ցասումն իրենց վրա ուղղելու վախից։

Ասվածը նկատի ունենալով ակնհայտ է դառնում, որ բավականին բարդ է մեր երկրների քաղաքական էլիտաներից ակնկալել հակամարտության կարգավորմանն առնչվող բարդ ու պատասխանատու որոշումներ, անգամ եթե նման որոշումները համապատասխանում են այն երկրների երկարաժամկետ շահերին, որոնց առաջնորդում են այդ էլիտաները: Հիմնական նկատառումները, որոնցով, որպես կանոն, առաջնորդվում են քաղաքական էլիտաները, սեփական քաղաքական և սոցիալ-տնտեսական դիրքերի պահպանումն ու ամրապնդումն է: Ստատուս-քվոյի ցանկացած կտրուկ փոփոխություն, անգամ եթե այն ընդհանուր առմամբ բարենպաստ է հանրության համար, կարող է հանգեցնել էլիտաների կողմից իրենց դիրքերի լիովին կամ մասնակի կորստի: Բոլոր մյուս նկատառումները երկրորդական են սեփական դիրքերը պահպանելու՝ կառավարող էլիտայի ձգտման համեմատ:

Քաղաքական էլիտաները կարող էին շահագրգռված լինել հակամարտությունների լուծմամբ, եթե «ստատուս-քվո» իրավիճակը սպառնար նրանց դիրքերին: Նման բան կարող էր տեղի ունենալ արտաքին միջամտության պարագայում կամ էլ հակամարտությունների «ապասառեցման» դեպքում: Սակայն հակամարտության մեջ ներգրավված բոլոր պետություններում ներկայիս ստատուս-քվոն, կամ, այլ կերպ ասած, «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակն ընդհանուր առմամբ ձեռնտու է քաղաքական էլիտաներին: Եվ ընդհակառակը՝ իրական կարգավորմանը միտված յուրաքանչյուր քայլ կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ և կասկածի տակ դնել քաղաքական էլիտաների դիրքերը: Այս պայմաններում ցանկացած խաղաղարար նախաձեռնություն բախվում է գործնականում անհաղթահարելի խոչընդոտների այն ամենում, ինչը վերաբերում է քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա ազդեցությանը:

Խաղաղարար նախաձեռնություններ. ու՞մ հետ աշխատել և ինչպե՞ս

Այնուհանդերձ, ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող խաղաղարար նախաձեռնություններ իրականացվել են ավելի քան 20 տարիներ ի վեր և շարունակվում են իրականացվել: Զուտ այն փաստը, որ նման նախաձեռնությունները տեղ են գտնում, անկասկած դրական է թեկուզև նրանով, որ նման նախաձեռնությունները հանդիպելու և շփվելու հնարավորություն են տալիս այն մարդկանց, որոնց երկրների միջև հաղորդակցությունը գործնականում բացառված է: Որքան էլ առաջին հայացքից աննշան թվա այդ արդյունքը, իրականում դա շատ կարևոր ձեռքբերում է խաղաղարարության ոլորտում, քանի որ այդ կերպ ստեղծվում է հաղորդակցման խողովակ, որը շատ կարևոր է միմյանցից հանրությունների՝ քաղաքական էլիտաների կողմից պարտադրված գրեթե լիակատար մեկուսացման պայմաններում: Այն պայմաններում, երբ կառավարությունները կամ գիտակցաբար են խոչընդոտում նման փոխկապերի ստեղծմանը, կամ էլ, լավագույն դեպքում, անտեսում են դրանք, դժվար է պատկերացնել, թե առանց միջազգային կազմակերպությունների ու դոնորների ինչպես կարող էր ծագել և գոյություն ունենալ հաղորդակցման այդպիսի խողովակ:

Այս առումով հատկապես կարևոր են այն նախաձեռնությունները, որոնցում ներգրավվում են Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները: Բանը նրանում է, որ Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչները հանդիպելու շատ հնարավորություններ ունեն նույնիսկ առանց զանազան միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների նախաձեռնությունների. նրանք հանդիպում են տարածաշրջանային ու միջազգային միջոցառումների շրջանակներում ամենատարբեր ձևաչափերով՝ միջկառավարական գագաթաժողովներից մինչև ակադեմիական սեմինարներ (զորօրինակ, ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում իրականացվող ծրագրերից մինչև ԱՊՀ շրջանակներում կազմակերպվող միջոցառումներ): Մինչդեռ չճանաչված կամ մասնակի ճանաչված պետությունների ներկայացուցիչները, որպես կանոն, նման ձևաչափերին մասնակցելու հնարավորություններ չեն ունենում. արդյունքում ստացվում է, որ եթե Հայաստանի ու Ադրբեջանի էլիտաների ու հանրությունների միջև այսպես թե այնպես կան ինչ-որ փոխկապեր, ապա Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի հանրությունները բացարձակապես մեկուսացված են միմյանցից: Ուստի միջազգային կազմակերպությունների ու դոնորների այն նախաձեռնությունները, որոնց մասնակցում են Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները, փաստորեն միակ հնարավորությունն են Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի միջև թեկուզև ինչ-որ կապեր հաստատելու համար:

Ոչ կառավարական կազմակերպություններ ներգրավող խաղաղարար նախաձեռնություններին առնչվող լուրջ երկընտրանքներից մեկն այն կազմակերպությունների խնդիրն է, որոնք, այսպես ասենք, լոյալ են իրենց երկրների կառավարող էլիտաների նկատմամբ. ընդունված է դրանց բնորոշել «ԳՈՆԳՈ» («պետական ՀԿ-ներ») եզրույթով: Արդյո՞ք պետք է այդ կազմակերպություններին ներգրավել խաղաղարար նախաձեռնություններում, և եթե այո, ապա ի՞նչ չափով: Մի կողմից՝ նման կազմակերպությունները քիչ չեն և դրանք ներկայացնում են հանրության որոշակի մասի կարծիքներն ու մոտեցումները, որոնք ճիշտ չէր լինի

անտեսել։ Թվում է, նման կազմակերպությունները կարող են դիտարկվել որպես կառավարող էլիտաների հետ շփումների խողովակ, և նկատի ունենալով այն հանգամանքը, որ բոլոր կարևոր որոշումներն ի վերջո ընդունվում են քաղաքական գործիչների կողմից, դա կարող է միանգամայն օգտակար լինել։ Ինչ խոսք, դա կարող էր օգտակար լինել այն իրավիճակում, երբ հակամարտության մասնակից պետությունների իշխանություններն անկեղծորեն շահագրգռված են հակամարտության լուծմամբ, ու քանի որ հանրությունները պատրաստ չեն փոխզիջումների՝ իշխանությունները ձգտում են իրենց քաղաքացիներին նախապատրաստել փոխզիջումների, և որոշակի աշխատանք տանել նրանց շրջանում։ Սակայն ասվածն ավելի շատ վերաբերում է տեսությանը, քան պրակտիկային, համենայն դեպս՝ Հարավային Կովկասի պարագայում։ Իրականում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր տարածաշրջանի երկրների կառավարություններն այնքան էլ դրական չեն վերաբերվում խաղաղարար նախաձեռնություններին, այդօրինակ կազմակերպությունների մասնակցությունը ոչ միայն առանձնակի օգուտ չի բերում, այլև զգալի ռիսկի հետ է կապված այն առումով, որ խաղաղարար նախաձեռնությունները կարող են հայտնվել խափանման կամ իմիտացիոն գործընթացի վերաճելու վտանգի տակ։

Խաղաղարար նախաձեռնություններին առնչվող մեկ այլ խնդիր էլ կայանում է նրանում, որ այդ նախաձեռնությունների արդյունքները հաճախ մատչելի են «արհեստավարժ» խաղաղարարների համեմատաբար նեղ շրջանակի համար, և հանրության ավելի լայն շերտերում դրանց տարածումն ընդհանուր առմամբ բավականին սահմանափակ է։ Այդ արդյունքներն այնքան էլ լայնորեն չեն ներկայացված ոչ միայն ավանդական, այլև «նոր մեդիայում»։ Այսպիսով, հայերի և ադրբեջանցիների մեծ մասը քիչ է իրազեկված այդ արդյունքների մասին, ավելին՝ նրանցից շատերի մոտ ստեղծվում են այդ նախաձեռնությունների մասին միֆականացված ու կարծրատիպացված պատկերացումներ, ըստ որոնց այդ նախաձեռնություններն ուղղված են իրենց երկրի ազգային շահերի դեմ։

Իհարկե, պիտի հաշվի առնել նաև օբյեկտիվ բարդությունները, որոնք առնչված են հանրությանն այդ արդյունքները ներկայացնելու հետ։ Որոշ դեպքերում խաղաղարար նախաձեռնությունների ու դրանց արդյունքների վրա ուշադրություն սևեռելու փորձերը հակառակ արդյունքն են տալիս, ինչպես դա եղել է, օրինակ, Հայաստանում ադրբեջանական ֆիլմերի փառատոնի անցկացման նախաձեռնության պարագայում, երբ խաղաղարար նախաձեռնությունների վրա հանրության ուշադրությունը սևեռելու փորձը ոչ միայն ցանկալի արդյունք չի տվել, այլև օգտագործվել է այն ուժերի կողմից, որոնք հանդես են գալիս նման նախաձեռնությունների դեմ։

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված խաղաղարար նախաձեռնությունների մեծ մասը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- ոչ կառավարական կազմակերպությունների մակարդակով երկխոսություն,
- ԶԼՄ-ների ներկայացուցիչների միջև երկխոսություն,
- փորձագետ-քաղաքագետների մասնակցությամբ ծրագրեր,
- ակադեմիական հանրույթների ներկայացուցիչների միջև երկխոսություն,
- բնակչության որոշակի խմբերի (այդ թվում՝ խոցելի խմբերի) ներկայացուցիչների միջև երկխոսություն՝ երիտասարդներ, կանայք, փախստականներ, զանազան մասնագիտությունների ներկայացուցիչներ և այլն:

Խաղաղարար նախաձեռնությունները նվիրված էին ամենատարբեր խնդիրների։ Սույն հետազոտության շրջանակներում հարցման ենթարկված փորձագետներից մեկի խոսքերով՝ «խաղաղարար նախաձեռնությունները 1990-ականների սկզբից հասցեագրված էին հակամարտության շատ հայեցակետերի՝ սկսած չճանաչված պետությունների/տարածքների կարգավիճակից ներառյալ՝ տեղահանված անձանց հարցերը, մինչև սովորական շփումներն այն մարդկանց միջև, ովքեր գտնվում են հակամարտության տարբեր կողմերում, ինչպես, օրինակ, երիտասարդները, կանայք և այլք»։ Մեկ այլ փորձագետի կարծիքով՝ համեմատաբար քիչ ծրագրեր են նվիրված եղել ապագայի տեսլականին, իրավիճակի իրատեսական ուսումնասիրությանը, ինչպես նաև քիչ են եղել ոչ երկխոսային ծրագրերը, այսինքն այնպիսի ծրագրերը, որոնք սեփական հանրության ներսում են աշխատանք ենթադրում։ Նույն փորձագետի կարծիքով՝ ամենանվազ հետաքրքիրը աշխարհաքաղաքական նախագծերն էին, «երբ տարեցներն ու երիտասարդները հավաքվում են և նորից ասում, թե ինչ են մտածում հակամարտության մասին՝ իբր թե վերլուծելով այն»։

Մեկ այլ փորձագետի կարծիքով՝ տարբեր փուլերում ուշադրության կենտրոնում են եղել խնդիրների զանազան խմբեր։ Այսպես, սկզբնական փուլում առաջնահերթ էին այնպիսի խնդիրները, ինչպիսին են

ռազմագերիների փոխանակումը, անհայտ կորածների որոնումներն ու մյուս կողմի հետ արդյունավետ համագործակցելու ունակ խաղաղարարների խմբերի ձևավորումը: Պայմանականորեն երկրորդ փուլն ավելի երկարատև էր և ուղղված էր հակամարտության հնարավոր լուծումներ գտնելու փորձերին, զանազան մեթոդների ու այլ երկրների օրինակներին: Այն բանից հետո, երբ նման նախագծերը սկսեցին խոչընդոտվել 2000-ական թվականների սկզբներից ադրբեջանական իշխանությունների դիրքորոշման փոփոխության հետ կապված, հաղորդակցության անհրաժեշտության մասին հարցը կրկին հրատապ դարձավ, բայց դրան ավելացավ նոր խնդիր՝ երիտասարդության, պատմաբանների, լրատվամիջոցների և այլնի շրջանում հետպատերազմյան ժամանակաշրջանում ծագած կարծրատիպերի հաղթահարումը: Հայեցակարգային տեսանկյունից, ըստ փորձագետներից մեկի, կարելի է երեք հիմնական խնդիր առանձնացնել, որոնց էլ նվիրված է եղել խաղաղարար նախաձեռնությունների մեծ մասը.

- միմյանց նկատմամբ անվստահության հաղթահարում,
- հետևողականորեն ստեղծվող թշնամու կերպարի հաղթահարման ձգտում,
- համագործակցության այնպիսի հնարավոր ոլորտների հայտնաբերման փորձեր, որոնք կարող են օգտակար լինել խաղաղության կառուցման համար:

Խաղաղարար նախաձեռնություններին առնչվող կարևոր հարցերից մեկն էլ սոցիալական տարբեր շերտերի ընդգրկման մասին հարցն է: Որչա՞փ են խաղաղարար նախաձեռնությունները բաց սոցիալական տարբեր խմբերի համար, հաջողվում է, արդյո՞ք, խաղաղարար ուղերձ հասցնել բնակչության լայն շերտերին:

Փորձագետների մեծ մասը համաձայն է, որ թեև ձևական տեսանկյունից ծրագրերում ներգրավվել են ամենատարբեր խմբերի ներկայացուցիչներ, այնուամենայնիվ, նրանց ընդգրկումը մնում էր բավականին նեղ, և դա ցայսօր հանդիսանում է խաղաղարարության ոլորտում առկա հիմնական խնդիրներից մեկը: Այստեղ, կարծում եմ, տեղին է մեջբերել հարցված փորձագետներից մեկի կարծիքը, ըստ որի ներգրավվել են ամենատարբեր խմբեր, խաղաղարար ծրագրերում չափից ավելի հաճախ մասնակցել են «այսպես կոչված վերլուծաբաններն ու փողկապավոր տղամարդիկ, կանայք, ովքեր կարիերա են անում գենդերային հարցերով զբաղվելով, երբեմն էլ այսպես կոչված երիտասարդությունը՝ վաղահաս կարիերիստները, և առավել քիչ մարդիկ շրջաններից, կամ էլ՝ ընդհանրապես իսկական մարդիկ: Ընդհանրապես, իսկական մարդիկ, իհարկե, քիչ են, և այդ նախագծերի խնդիրն այն է, որ դրանց մեծ մասն արվում է փողի համար… Դրանցում գոնե ինչ-որ բանի հասնելու համար հարկ է ավելի շատ աշխատել հանուն քաղաքացիական հասարակության և տարածաշրջանի ապագայի, այլ ոչ թե հանուն փողի… Դա դժվար է…Խաղաղարար լինելը նույնքան դժվար է, որքան այսօր տաղանդավոր նկարիչ լինելը… Այն հատով ապրանք է»:

Ինչպես մեկ այլ փորձագետ է նշում, «հիմնականում ներգրավվել են մարդիկ, ովքեր փոքրիշատե մասնագիտորեն առնչված են հիմնախնդրին…Չեն օգտագործվում գիտնականների, պաշտոնաթող դիվանագետների հնարավորությունները»: Այս նույն փորձագետի կարծիքով՝ բացասական դեր է խաղացել բոլոր տեսակի հարաբերությունների սահմանափակման մասին Ադրբեջանի որոշումը, ինչպես նաև դոնորների ոչ միշտ ճիշտ քաղաքականությունը , որոնք հաճախ բաց էին թողնում խաղաղարար նախաձեռնություններում ներգրավված մարդկանց շրջանակի ընդլայնման հնարավորությունները: Այսպես, որոշ բացառություններով, բաց է թողնվել բիզնեսը ներգրավելու և այնպիսի կառույցներ ստեղծելու հնարավորությունը, որոնք կարող էին հովանավորել հենց իրենց՝ Հայաստանի ու Ադրբեջանի գործարարների կողմից: Այս փորձագետի կարծիքով՝ բավականին հեռանկարային կարող էր լինել հայ և ադրբեջանցի գործարարների մասնակցությամբ համատեղ բիզնես-ծրագրերի ստեղծումը (բնականաբար, երրորդ երկրներում), ինչը ժամանակի ընթացքում կարող էր նպաստել խաղաղության մեջ շահագրգռված տնտեսական լոբբիի ձևավորմանը:

Ինչպես նկատեց մեկ այլ փորձագետ՝ իրականացված նախագծերը ներգրավել են ամենատարբեր գործիչների և սոցիալական խմբերի: Այլ հարց է, որ ոչ բոլոր ծրագրերն են հաջողված եղել, և նրանց նպատակը՝ երկխոսության մեջ ներգրավել սոցիալական նոր խմբեր, ոչ միշտ է հասանելի եղել: Որոշ փորձագետներ նաև նշեցին այն ծրագրերի փոքրաթվությունը, որոնցում ներգրավվել են սփյուռքի ներկայացուցիչները: Եվս մի փորձագետ նշել է, որ «բացառությամբ երիտասարդական, գենդերային և փախստականների մասնակցությամբ ծրագրերի, բոլոր մյուսները սահմանափակված էին գործունեության ձևերի շրջանակներով (լրագրողներ, իրավապաշտպաններ, ակադեմիական հանրույթի ներկայացուցիչներ և այլն): Այսինքն՝ այն մարդիկ, ովքեր չէին մտնում այդ խմբերից որևէ մեկի մեջ, մասնակցելու հնարավորություն չունեին»: Փորձագետներից մեկն էլ նաև նշեց, որ ոչ բավարար ուշադրություն է դարձվել տարբեր մարգինալ խմբերի, ինչպես նաև պահպանողական և ազգայնամոլական տրամադրություններ ունեցող խմբերին. ինչ խոսք, դժվար է պատկերացնել երկխոսություն նրանց միջև, բայց հարկ է նրանց ներգրավելու ուղիներ փնտրել:

Խաղաղարար նախաձեռնությունների գնահատումը

Եթե խոսելու լինենք խաղաղարար նախաձեռնությունների հաջողվածության մասին, ապա այստեղ հարց է ծագելու՝ ինչպե՞ս սահմանել չափանիշներ, որոնք թույլ կտային գնահատելու դրանց հաջողվածությունը։ Այսպես, փորձագետներից մեկն առաջարկում է տարբերակել հաջողվածությունը լայն ընկալմամբ, ինչն արտահայտվում է անգլերեն “effectiveness” բառով և հաջողվածությունը նեղ ընկալմամբ, ինչն արտահայտվում է անգլերեն “efficiency” բառով։ Եթե խոսելու լինենք “effectiveness”-ի մասին, ապա ծրագրերի մեծամասնությունը հաջողված չէր, քանի որ դրանցից շատերն այդպես էլ չեն հանգեցրել կոնկրետ արդյունքների ստեղծմանը, իսկ այն արդյունքները, որոնք, այնուամենայնիվ, ստեղծվել են նման նախաձեռնությունների ընթացքում, գրեթե չեն օգտագործվել պրակտիկայում։ Սակայն հաջողվածության մասին նեղ ընկալման, այն է՝ “efficiency”-ի պարագայում, շատ նախագծեր հաջողված են եղել, քանի որ դրանց շնորհիվ ապագայի համար զգալի ներուժ է ստեղծվել։ Մասնավորապես, կապեր են ստեղծվել հակամարտության մեջ ներգրավված հանրությունների կյանքի տարբեր ոլորտներ ներկայացնող մարդկանց միջև: Նման կապերն այն ռեսուրսն է, որը կարող է ապագայում օգտագործվել։ Բացի դրանից, նման նախաձեռնությունների ընթացքում անցկացվել են հետազոտություններ, որոնք կարող են օգտակար լինել ապագայում, երբ հանրություններն ու քաղաքական էլիտաները հակամարտությունը լուծելու քաղաքական կամք ունենան։

Մեկ այլ փորձագետի կարծիքով՝ առանձնակի առաջխաղացում չկա, և դրա պատճառներից մեկն էլ կայանում է նրանում, որ «նորեկներից ոչ ոք չի կարող իմանալ այդ ծրագրերի գոնե մի մասի մասին, նույնիսկ չգիտես, թե որտեղ տեղեկություններ փնտրել…և դրա պատճառը նրանում է, որ նախագծերի մասին տեղեկատվության տարածումը ա) սովորաբար նախատեսված չէր ծրագրերի բյուջեում կամ բ) անգամ եթե եղել է՝ մասնակիցները խորապես շահագրգռված են այդ ծրագրերում իրենց մասնակցության մասին չտեղեկացնելու և դրա վրա ուշադրություն չհրավիրելու մեջ…պատճառը նրանում է, որ այդ մարդիկ գումարային առումով պարզապես շահագրգռված են կթելու արտասահմանյան հարուստ կովը: Կամ այդ մարդիկ վախենում են, որ իրենց մասնակցությունը բացասական արձագանք կգտնի հանրությունում, կամ էլ այս երկու պատճառները միասին»։ Խաղաղարարությունը, ըստ սույն փորձագետի, ոչ միայն չի օգնել հաղթահարելու դիմակայությունը, այլև չի նպաստել «որպեսզի երկրների ներսում ստեղծվեն նվազ ազգայնամոլական, ռասիստական, ֆաշիստական հանրույթներ…Ցավոք, իշխանությունները գնացին մյուս կողմի նկատմամբ ֆաշիզմի սերմանման ուղիով՝ հանուն իշխանության պահպանման…Այն կարծիքը, որ հակամարտությունում կարելի է բեկման հասնել առանց հանրություններում ժողովրդավարության հաստատման՝ չի արդարացվել»։ Այնուամենայնիվ, ինչպես նշում է նույն այդ փորձագետը, ընդհանուր առմամբ ողջ խաղաղարարական շարժումն իր գործն արել է, քանի որ պահպանվել են կապերն ու երկխոսությունը։

Մեկ այլ փորձագետ ծրագրերի հաջողվածությունը որոշելու ավելի յուրահատուկ չափանիշ է առաջարկում՝ ծրագրի նվազագույն հաջողությունը կարելի է որոշել ըստ այն բանի, թե որքանով է հաջողվել հաղորդակցությունը. եթե այն հաջողվել է, ապա իմաստ ունի առաջ շարժվել, փորձել զարգացնելու հաղորդակցության հնարավորությունները և շարունակելու աշխատանքը։ Հաջողված հաղորդակցության պարագայում ցանկացած համատեղ կամ համաձայնեցված արտադրանք՝ լինի դա տեքստ, տեսալսանյութ կամ միասին ձեռքբերված հմտություն ու գիտելիք, կարելի է հաջողություն համարել։ Այս տեսակետը զարգացնում է մեկ այլ փորձագետ, ով գտնում է, որ ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչպես են չափում հաջողությունը. եթե խոսենք այն մասին, թե արդյո՞ք այդ նախաձեռնություններն ունեցել են շարունակություն, ասենք, հետագա նախագծերի տեսքով, ապա դրանցից շատերն այդ առումով հաջողված են եղել։ Իսկ եթե խոսելու լինենք այն մասին, թե այդ ծրագրերի շնորհիվ որքանով են հանրությունները մերձեցել հաշտեցմանը, ապա հիմա շատ շուտ է այդ մասին դատել, և, հնարավոր է, պիտի տարիներ անցնեն, որպեսզի այդ նախաձեռնությունների ազդեցությունն ակնհայտ դառնա։ Փորձագետներից մեկի կարծիքով, բավականին հեռանկարային են այն նախաձեռնությունները, որոնք միտված են Հարավային Կովկասում ինտեգրման համակարգերի ստեղծման մասին գաղափարի առաջ մղմանը (պայմանականորեն ասած՝ Եվրամիության նմանությամբ՝ Հարավկովկասյան միություն), բայց այդ նախաձեռնություններն այնքան էլ պահանջված չէին մեր երկրների իշխանությունների կողմից իրական շահագրգռվածության բացակայության պատճառով, ինչպես նաև բուն հանրությունների ներսում աշխատելուն ուղղված լուսավորչական նախաձեռնությունների բացակայության պատճառով։

Ինչ վերաբերում է այն հարցին, թե խաղաղարար նախաձեռնություններն ի՞նչ չափով են ազդել քաղաքական մակարդակի վրա, ապա այստեղ փորձագետների մեծամասնությունը համամիտ էր, որ քաղաքական գործիչների ու կառավարությունների մակարդակով որոշումների ընդունման վրա խաղաղարար

նախաձեռնությունների ազդեցությունը, որպես կանոն, նվազագույնն է եղել։ Մի քանի փորձագետներ համակարծիք էին առ այն, որ բոլոր նախաձեռնությունները, հնարավոր է, որոշակի ազդեցություն ունեցել են քաղաքական մակարդակի վրա, սակայն այսօր դեռ վաղ է այդ մասին դատել, և եթե անգամ նման ազդեցություն եղել է, ապա այն ակնհայտ է դառնալու միայն երկարաժամկետ հեռանկարում։

Ինչպես կարծում է փորձագետներից մեկը, «ի սկզբանե սխալ էր խաղաղարար նախաձեռնությունները ներկայացնել որպես «քաղաքացիական դիվանագիտություն», իմա՝ որպես մի ինչ-որ բան, որը կարող է օգնել պաշտոնական մակարդակով քաղաքական երկխոսությանը…Այդ նախաձեռնությունները չպիտի համարվեին մի բան, որը կարող է ազդել քաղաքական մակարդակում որոշումների ընդունման վրա, քանի որ այդպիսի բան հնարավոր չէ առանց իշխանությունների համապատասխան վերաբերմունքի…Այդպիսի բան հնարավոր է դառնում, երբ կա պաշտոնական մակարդակով համապատասխան որոշում, ինչպես, ասենք, մի ժամանակ եղել է Քի-Վեստի առնչությամբ, երբ կառավարությունները պիտի հանրություններին նախապատրաստեին հնարավոր փոխզիջմանը»։

Փորձագետներից մեկն ընդգծեց, որ այս հարցում որոշակի տարբերություն կա ղարաբաղյան և հայ-թուրքական գործընթացների միջև. երկու դեպքերում էլ կառավարությունները քիչ խանդավառություն են ցուցաբերում խաղաղ երկխոսության կապակցությամբ, բայց դրանցից մեկի պարագայում նրանք գոնե փորձում են քաղաքացիական հասարակություններին չխանգարել երկխոսության մեջ մտնելու։ Մեկ այլ փորձագետ նույնպես գտնում է, որ «այդ նախաձեռնություններն իմաստ ունի շարունակել, միշտ էլ պետք է նման աշխատանք տանել, քանի որ այն դրականորեն է անդրադառնում հանրության ներսում առկա իրավիճակի վրա, խթանում է երիտասարդությանը, հանդիսանում է ազգայնամոլական գաղափարախոսությունների ազդեցության արդյունավետության նվազեցման միակ եղանակը»։

Եթե քաղաքական մակարդակի վրա քաղաքացիական նախաձեռնությունների ազդեցության առումով ամեն ինչ բավականին ոչ միանշանակ է, ապա հարց է ծագում՝ որքանո՞վ են դրանք արդյունավետ հենց իրենց՝ ծրագրերում որպես շահառուներ ներգրավված խմբերի վրա ազդեցության առումով։ Ինչպես գտնում է փորձագետներից մեկը, «հակամարտության կողմերի ներկայացուցիչների միջև ինքնին հաղորդակցման փաստը լուրջ գործոն է հանդիսանում վերաբերմունքի փոփոխության և կարծրատիպերի հաղթահարման համար։ Շրջանառվող գաղափարների տեսանկյունից կառուցողական համարվող նախաձեռնությունները նույնպես օգտակար նեցուկ են հակամարտության, հակամարտող կողմի և հակամարտության լուծման հնարավորությունների նկատմամբ վերաբերմունքը փոխելու համար»։

Ինչպես նշում է ևս մեկ փորձագետ, «ներգրավված խմբերը մյուս կողմի նկատմամբ ավելի «սիրառատ» չեն դառնում, բայց նրանք դառնում են սեփական կողմի նկատմամբ նվազ «սիրառատ», այսինքն՝ կարծրատիպացման աստիճանը նվազում է, իսկ քննադատության մակարդակը՝ մեծանում»։ Փորձագետներից ևս մեկի խոսքերով՝ մասնակիցներն, օրինակ, տեսնում են, որ «հայերն արնախում չեն, և ոչ բոլոր ադրբեջանցիներ են ռամիլսաֆարովներ»։ Ինչ վերաբերվում է նրանց, ովքեր չեն մասնակցում երկխոսությանը, ապա, փորձագետներից մեկի կարծիքով, նույնիսկ այն դեպքում, եթե նրանք չեն հանդիսանում բացասական կարծրատիպերի ու թշնամու կերպարի կրողներ և հանդես են գալիս հանուն խաղաղության, միևնույն է, չեն հավատում երկխոսության ուժին և կարծում են, որ ոչինչ չեն կարող փոխել, և իրենցից ոչինչ կախված չէ։

Որոշ փորձագետներ ավելի հոռետեսական են այս հարցում։ Այսպես, օրինակ, փորձագետներից մեկն ընդունում է, որ հոռետես է այս հարցում, քանի որ անգամ ամենահաջողված նախաձեռնությունները լավագույն դեպքում օգնել են դանդաղեցնելու թշնամանքի արմատավորումը, մինչդեռ արդի պայմաններում դրական դինամիկայի ստեղծման մասին դժվար է խոսել։ Ավելին, այն դեպքերում, երբ բացակայում էին խաղաղարար նախաձեռնությունների որակյալ անցկացման համար կարևոր որոշ բաղադրիչներ, որպիսին են կազմակերպիչների բանիմացությունն ու անկեղծությունը, նման նախաձեռնությունները նույնիսկ կարող էին հակառակ ազդեցությունն ունենալ, տարբեր կողմերի ներկայացուցիչների միջև հարաբերությունները կարող էին ավելի լարվել։ Քիչ չէ նաև պատահել, որ անգամ եթե անձնական մակարդակով նախաձեռնությունների մասնակիցների հարաբերությունները բարելավվել են կամ առնվազը չեն վատթարացել, ապա հանրության կողմից նրանց միջոցով ուղարկված ազդանշաններն ու հայտարարությունները բացասական էին և, այդպիսով, հանգեցնում էին հակամարտության խորացմանը։

Մեկ այլ փորձագետ նաև ուշադրություն է հրավիրում ոչ բավարար մտածված նախաձեռնությունների հնարավոր բացասական հետևանքների վրա. «հանդիպումներն, ինչ խոսք, օգտակար են գոնե ավելի տեղեկացված լինելու համար. լինում են հանդիպումներ, որոնք ազդում են մարդկանց վրա, նրանք նոր

բաներ են իմանում, բայց քանի որ մասնակիցների թիվը շատ սահմանափակ է, և նրանք այնքան էլ փորձ չունեն, դա կարող է հանգեցնել անկեղծության մակարդակի նվազման, և նման հանդիպումների արժեքավորությունը զրոյացվի, որովհետև ամեն անգամ սեփական երկիր վերադառնալով նրանք առնչվում են այնպիսի նախահարձակ արձագանքի, որ դրանից հետո անկեղծությունից հետք անգամ չի մնում»։

Խաղաղարար նախաձեռնությունների իրականացման արդյունավետության վրա ազդող գործոնները

Որո՞նք են խաղաղարար նախաձեռնությունների հաջողությանը նպաստած կամ խոչընդոտած գործոնները։ Ցավոք, այսօր տպավորություն է ստեղծվում, որ շատ ավելի հեշտ է հիշել այդ նախաձեռնություններին խանգարած գործոնները, քան նրանք, որ նպաստել են դրանց։ Այսպես, փորձագետներն այդ գործոններից են համարել.

- Քաղաքական գործոնները. ինչպես փորձագետներից մեկն ասաց՝ հակամարտության մեջ ներգրավված բոլոր պետություններում «առկա են արտաքին ուժերից կախյալ վիճակում գտնվող ավտորիտար ռեժիմներ»:
- Անմիջականորեն նախորդ կետից բխող՝ նախաձեռնությունների նկատմամբ պաշտոնական մակարդակով վերաբերմունքը (անշուշտ, պարբերաբար փորձեր են լինում խաղաղարար նախաձեռնությունները վարկաբեկել, սակայն դա համակարգային բնույթ չունի և ուղղված է ոչ այնքան ընդհանուր առմամբ խաղաղարարության գաղափարի դեմ, որքան քաղաքացիական հասարակության կոնկրետ գործիչների դեմ, որոնք կառավարությանը խանգարում են այլ առիթներով, մասնավորապես՝ նրան քննադատում են մարդու իրավունքները խախտելու համար)։
- Հանրության ներսում առկա հակամարտություն՝ ազգայնամոլական դիսկուրսը պաշտպանող զանգվածային կարծիքի և փոքրաթիվ այլընտրանքային դիրքորոշման միջև։
- Տեղերում չփորձարկված մեթոդների կիրառման փորձերն իրականում անարդյունավետ դուրս եկան (թեև տեսականորեն պիտի որ աշխատեին)։
- Նախաձեռնողների ոչ բանիմացությունը, ինչը հաճախ արդյունք էր այն բանի, որ օրակարգ էին թելադրում այլ տարածաշրջանների ու երկրների մարդիկ, իսկ 1990-ականների վերջից ի վեր այդ ոչ ձեռնհաս կազմակերպություններից շատերը շարունակում էին իներցիայով զգալի ռեսուրսներ ստանալ։
- Լուսավորչական աշխատանքի անբավարար լինելը և, որպես հետևանք, հանրություններում նման նախաձեռնությունների մասին ոչ բավարար իրազեկվածությունը։
- Ազգայնամոլական քարոզչությունը, որը հատկապես ներգործուն է երիտասարդ սերնդի շրջանում. խորհրդային փորձ ունեցող ավագ սերունդն ավելի է հակված անկեղծության։

Խաղաղարարությանը նպաստող գործոններն անհամեմատ քիչ են, բայց դրանք կան։ Փորձագետներից մեկի կարծիքով՝ ամենակարևոր գործոնը կայանում է նրանում, որ «հակամարտության մեջ ներգրավված պետություններում զարմանալիորեն շատ են այն մարդիկ, ովքեր նվիրված են երկխոսության գաղափարին և պատրաստ են շատ ջանքեր թափել ինչ-որ բանի հասնելու համար. . . Մարդիկ, ովքեր գիտեն, թե ինչը կարող է աշխատել և ինչը՝ ոչ, կան ամենատարբեր մակարդակներում՝ քաղաքական գործիչների, լրագրողների, հասարակական ակտիվիստների շրջանում»։ Փորձագետների մեծամասնության կողմից նշված մեկ այլ կարևորագույն գործոն է միջազգային դոնորների ուշադրությունը։ Թեև հարկ է նշել, որ ոչ միշտ է այս գործոնին առնչված իրավիճակն ամբողջովին միանշանակ։

Այսպես, փորձագետներից մեկի կարծիքով՝ «փողը նպաստել է, իսկ այն պայմանները, որոնց առկայությամբ տրամադրվել են այդ գումարները, երբեմն խոչընդոտել են։ Օրինակ, շատ դեպքերում դրանք հատկացվել են պայմանով, որ չներգրավեն Ղարաբաղն ու ղարաբաղցիներին»։

Փորձագետներից մյուսի կարծիքով՝ առաջին և ամենակարևոր գործոնը նման նախաձեռնություններին մասնակցելու ցանկության առկայությունը կամ բացակայությունն է, ինչպես նաև մասնակցության դրդապատճառները։ Գերիշխող ազգայնամոլական դիսկուրսը հաղթահարելու ունակ մարդիկ իրենց զինանոցում ավելի շատ միջոցներ ու հնարավորություններ ունեն նոր գաղափարների որոնման համար։ Երկրորդ կարևոր գործոնը նման նախաձեռնությունների կազմակերպման համար միջոցների առկայությունն է. այս առումով կարևոր է միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունը։ Նախաձեռնությունների ձևաչափերի բազմազանությունը (տարածաշրջանային, թեմատիկ, պրոֆեսիոնալ) նույնպես դրանց կիրարկմանը նպաստող գործոն է։

Եթե բուն տարածաշրջանում խաղաղարարությանը խոչընդոտող գործոններն ավելի շատ են, քան նպաստող գործոնները, ապա զարգացման գլոբալ միտումները, ինչպես կարծում են հետազոտության շատ մասնակիցներ, ավելի բարենպաստ են հակամարտությունների լուծման համար։ Այսպես, փորձագետներից մեկի կարծիքով՝ «միակ գործոնը, որ կարող է իրապես դրական լինել, գոյություն ունեցող գլոբալ միտումն է, երբ նոր աշխարհ է ձևավորվում, երբ այլ հարաբերություններ են գործում, այսինքն՝ համացանցային տարածքի հայտնվելը, անձնական ազատության աճը, անհատական որոշումների ընդունման համար պատասխանատվությունը»։ Սակայն ժամանակ է պետք, որպեսզի այս միտումները հասցնեն իրենց դրական ազդեցությունն ունենալ մեր տարածաշրջանի վրա։ Այս նույն փորձագետի կարծիքով՝ «քանի որ այս գործոնը դեռ նոր-նոր է իրեն զգացնել տալիս, իսկ կառավարման համակարգը մնացել է հինը, ապա արդյունքը քաոսն է, որը մենք տեսնում ենք, և որն ազդում է խաղաղարար բոլոր փորձերի վրա»։ Ինչպես գտնում է հետազոտության ժամանակ հարցման ենթարկված փորձագետներից մեկը՝ փորձը ցույց է տալիս, որ ղարաբաղյան հիմնախնդրի նման հակամարտությունները լուծվում են, որպես կանոն, երկու ճանապարհով։

Դրանցից մեկը ժողովրդավարականն է, երբ վստահությանն առնչվող բոլոր մեթոդները կասկած չեն հարուցում (լավագույն օրինակը Քվեբեկն է, որն անջատման հակառակորդների աննշան առավելության շնորհիվ մնաց Կանադայի կազմում)։ Այս ուղին ենթադրում է լուծման ժողովրդավարական եղանակ՝ հանրաքվեներ, կամարտահայտության այլ ձևեր, իշխանական կառույցների կողմից տարվող լուսավորչական աշխատանքներ։ Երկրորդ ուղին, ըստ այս կարծիքի, հակամարտության փոխակերպումն է, ինչը «նույնպես ենթադրում է ժողովրդավարության բարձր մակարդակ և հանրությունում իրական գործընթացների զարգացում. այս ուղու լավագույն օրինակը ԵՄ ստեղծման պատմությունն է…Այն փաստը, որ Հարավային Կովկասում մենք առայժմ չենք կարող խոսել կայացած քաղաքացիական հասարակության մասին, անհաջողությունների հիմնական պատճառն է»։ Խաղաղարար ծրագրերի անհաջողության պատճառների թվում փորձագետները նշում են թույլ քաղաքացիական հասարակությունը, լուսավորչական աշխատանքների իսպառ բացակայությունը, իշխանությունների կողմից ազգայնամոլական գաղափարախոսության առաջմղումը, ինչը միտված է ստատուս քվոյի պահպանմանը, քանի որ դա ձեռնտու է իրենց։

Եզրահանգում

Մեր հետազոտության ընթացքում փորձագետների, կազմակերպիչների և մասնակիցների կողմից արտահայտված մոտեցումների հիման վրա կարելի է մի շարք եզրակացություններ անել։

Ակնհայտ է, որ ընդհանուր առմամբ խաղաղարար նախաձեռնություններն օգտակար են հակամարտության մեջ ներգրավված հանրությունների համար, և անհրաժեշտ է, չնայած բոլոր դժվարություններին, շարունակել դրանք։ Ինչ վերաբերում է այդ նախաձեռնությունների արդյունավետությանը, ապա ներկա փուլում բավականին բարդ է այն չափելը։ Եթե խոսենք քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա անմիջական ազդեցության մասին, ապա այս առումով նման նախաձեռնությունները քիչ արդյունավետ են, քանի որ մեր երկրների քաղաքական էլիտաների մոտ բացակայում է հակամարտության լուծման քաղաքական կամքը։ Իսկ եթե խոսենք հաղորդակցման խողովակների ստեղծման ու պահպանման մասին, որոնք նպաստում են հաղթահարելու միմյանցից հանրությունների մեկուսացումը և հանդիսանում են հեռանկարային խաղաղարար ռեսուրս, որը կբացվի այն պահին, երբ փոխված կլինի քաղաքական էլիտաների դիրքորոշումը, ապա խաղաղարար գործունեությունն ընդհանուր առմամբ կարելի է հաջողված համարել։

Ինչ խոսք, գոյություն ունեն օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի բազում դժվարություններ։ Ամենահիմնական դժվարությունը քաղաքական էլիտաների բացասական վերաբերմունքն է, ինչն իրենց երկրներում ի զորու չեն հաղթահարել ոչ միայն իրենք՝ խաղաղարարները, այլև միջազգային դոնորները։ Այս վերաբերմունքը հետևանք է ներքաղաքական և արտաքին-քաղաքական գործոնների որոշակի զուգակցման և, ամենայն հավանականությամբ, այն կարող է փոխվել կամ մեր երկրներում քաղաքական համակարգի փոփոխմամբ, կամ էլ մեր տարածաշրջանում ու դրա շուրջ աշխարհաքաղաքական փոփոխությունների հետևանքով։ Սակայն գլոբալ քաղաքական գործոններից զատ, առկա են նաև ավելի մասնավոր խնդիրներ, որոնք կարելի է լուծել խաղաղարար նախաձեռնություններին մասնակցող կազմակերպությունների շրջանակի ընդլայնման, հանրությունների ներսում լուսավորչական աշխատանքների ավելի բաց ու արդյունավետ ռազմավարության և խաղաղարար նախաձեռնությունների տեղեկատվական ապահովմամբ։

Երախտագիտության խոսքեր

Հեղինակները շնորհակալություն են հայտնում բոլոր նրանց, ովքեր մասնակցել են փորձագիտական հարցազրույցներին ու ֆոկուս-խմբերին՝ Օլյա Ազատյանին, Կարեն Հակոբյանին, Աննա Հարությունյանին, Հայկակ Արշամյանին, Լալա Ասլիկյանին, Արտակ Այունցին, Արմինե Բաբաջանյանին, Գևորգ Տեր-Գաբրիելյանին, Սեդա Գրիգորյանին, Տիգրան Զաքարյանին, Սուրեն Զոլյանին, Մարիա Կարապետյանին, Մարինե Մանուչարյանին, Բորիս Նավասարդյանին, Արմեն Օհանյանին, Դավիթ Հովհաննիսյանին, Միքայել Հովհաննիսյանին, Սարհատ Պետրոսյանին, Սուրեն Սաղաթելյանին, Մանե Թամանյանին, Մարգարիտա Թաղևոսյանին և մյուսներին։

Հայացք Ստեփանակերտից

Խաղաղարար նախաձեռնությունների համառոտ ակնարկ

ԼՂՀ-ում առաջին ոչ կառավարական կազմակերպության՝ «Հելսինկյան նախաձեռնություն-92» Լեռնային Ղարաբաղի կոմիտեի ստեղծումն անմիջականորեն կապված էր ղարաբաղյան հակամարտության հետ և պատասխան էր Լեռնային Ղարաբաղի խաղաղ քաղաքացիների նկատմամբ ռազմական գործողությունների ընթացքում դրսևորված բռնություններին։ «ՀՆ-92» ԼՂ կոմիտեն առաջնահերթ խնդիր էր համարում Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի միջև ռազմական գործողությունների դադարեցումը։ Սույն կոմիտեի համակարգող Կարեն Օհանջանյանի կարծիքով՝ 1992-ից մինչև 1998-ը այդ կազմակերպությունը, փաստորեն լինելով Լեռնային Ղարաբաղում միակ ոչ կառավարական կազմակերպությունը, իր մեջ ներառել էր Լեռնային Ղարաբաղի գործնականում ողջ քաղաքացիական հասարակությունը։

Հակամարտության նկատմամբ քաղաքացիական հասարակության գործունեությունը կարելի է բաժանել հետևյալ ուղղությունների.

Քաղաքացիական հասարակության կայացում ու տարածաշրջանային գործընկերների հետ հարաբերությունների հաստատում

- Ադրբեջանի և Հայաստանի քաղաքացիական հատվածների հետ փոխկապերի հաստատում՝ ռազմական գործողությունների դադարեցմանը, պատերազմի կանխարգելմանը և պատերազմի հետևանքների վերացմանն *(հումանիտար ոլորտ)* ուղղված համատեղ գործողությունների համակարգման նպատակով, և հակամարտության մեջ ներգրավված կողմերի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև ուղիղ բանակցությունների մեկնարկ՝ հաշտեցման ուղիներ որոնելու և ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործում իշխանություններին աջակցելու նպատակով։
- Համատեղ նախաձեռնությունների և բնակչության լայն խմբեր ներառող նախաձեռնությունների իրականացման մեկնարկ, նախաձեռնություններ, որոնք խարսխված էին 1993-ից մինչև 2005-ը եղած փոխայցելությունների վրա, և իրական ազդեցություն ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում անցկացվող պաշտոնական բանակցությունների ընթացքի վրա։
- Լեռնային Ղարաբաղի հարցով Բունդեստագում (Գերմանիա) հակամարտող երկրների քաղաքացիական առաջնորդների և ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների մասնակցությամբ համաժողով (ընդունվել են Բունդեստագում ներկայացված խմբակցությունների առաջնորդների համատեղ բանաձև և Բունդեստագի նախագահ Ռիտա Զյուսմունդի աննախադեպ ուղերձը հակամարտող երկրների՝ Ադրբեջանի, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի ղեկավարներին, որում կոչ է արվում ի նշանավորումն հրադադարի մասին համաձայնագրի առաջին տարեդարձի (1995 թվականի մայիսի 12-ին) ազատել բոլոր ռազմագերիներին ու պատանդներին՝ «բոլորին բոլորի հետ» սկզբունքով։
- Հակամարտության երկրներում ժողովրդավարական գործընթացների սկիզբ՝ քաղաքացիական հասարակության ժողովրդավարացում, հակամարտության երկրներում իրական երրորդ հատվածի կազմավորում (1996-1998թթ.)։
- Ղարաբաղյան հակամարտության խաղաղ փոխակերպմանն ուղղված ծրագրերի իրականացման սկիզբ (հակամարտության մեջ ներգրավված երկրների քաղաքացիական հասարակության արհեստավարժեցում)։

Ռազմական գործողությունների հետևանքով ծագած հումանիտար խնդիրների լուծման գործում իշխանություններին աջակցություն *(ռազմագերիների, պատանդների, անհայտ կորած անձանց, փախստականների ու ներքին տեղաշարժված անձանց՝ ՆՏԱ, հիմնախնդիրը),* նախկին հրամանատարների ու կոմբատանտների հետպատերազմյան վերականգման և հանրությունում վերաինտեգրման, նրանց մի մասին խաղաղարար գործընթացում ներգրավման սկիզբ։

Ինչպես հակամարտության կարգավորմանը, այնպես էլ հետպատերազմյան հանրությունների ժողովրդավարացմանն առնչվող հարցերի լուծման գործում ***միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների հաստատում***, ժողովրդավարացումը դիտարկելով որպես հակամարտության կարգավորման մոտեցումների ու մոդելների քննարկման անհրաժեշտ չափանիշ (այս ուղղությամբ աշխատելու համար փորձագետների ներգրավում՝ 1998-2012թթ.)։

2000 թվականից ի վեր իրավիճակը հետևյալ կերպ է զարգացել.

- Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման բանակցային գործընթացում պետական ինստիտուտների դերի մեծանշորհում (միջազգային միջկառավարական ինստիտուտներն, ընդ որում, անհաճո դեր են ունեցել դրանում), հակամարտության մեջ ներգրավված երկրների քաղաքացիական հասարակությունների միջև վստահության միջոցների ստեղծմանը և համատեղ հումանիտար ծրագրերի իրականացմանն ուղղված նախաձեռնությունների արդի օրակարգից քաղաքացիական հասարակության աստիճանական դուրսմղում։
- Խաղաղարար նախաձեռնություններին միջազգային աննախադեպ դրամաշնորհային աջակցության համապատկերում քաղաքացիական հասարակության մարգինալացում, հակամարտության մեջ ներգրավված երկրներում ռազմական հռետորաբանության ուժգնացում, լարվածության աճ (այդ գործընթացներում լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության մի մասի ներգրավում)։
- Ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո անցկացվող պաշտոնական բանակցությունների, այնպես էլ այլ միջկառավարական ինստիտուտների ու ոչ կառավարական կազմակերպությունների շրջանակներում խաղաղարար գործընթացի համատարած լճացում։ Հանրություններում փոխզիջման գնալու չկամություն։ Իշխանությունների կողմից հանրություններում փոխզիջման գնալու չկամության և իբր թե հակամարտության կարգավորմամբ սեփական շահագրգռվածության շահարկում։
- Սառեցված հակամարտության թեժ փուլ թևակոխելու սպառնալիքի աճ (ԵԱՀԿ փաստաթղթերը և Մինսկի խմբի համանախագահող երկրների առաջնորդների հայտարարությունները ղարաբաղյան հիմնախնդիրն ուժային ճանապարհով լուծելու անթույլատրելիության մասին)[1]։

Խաղաղարար նախաձեռնությունների հիմնական մասնակիցները

Նախաձեռնություններում ներգրավվել են ղարաբաղյան հանրության գրեթե բոլոր շերտերը։ Նրանք մտավորականության ներկայացուցիչներն են՝ բժիշկներ, պրոֆեսորներ, ուսանողներ, արվեստի գործիչներ, հոգևորականներ, քաղաքական գործիչներ, ադ թվում երիտասարդ քաղաքական գործիչներ (նրանք իրականացնում էին “Youth in Politics” կոչվող ծրագիրը), քաղաքագետներ, իշխանությունների ներկայացուցիչներ (ներառյալ խորհրդարանի խոսնակն ու պատգամավորներ, նախարարներ և նախագահական աշխատակազմի ներկայացուցիչներ) , լրատվամիջոցների ներկայացուցիչներ, գործարարներ, նախկին կոմբատանտներ, կենսաթոշակառուներ, ռազմագերիների ու անհայտ կորած անձանց հարազատներ, հաշմանդամներ, կրոնական փոքրամասնությունների ու երիտասարդության ներկայացուցիչներ, կանայք և դպրոցականներ։

Գյուղերի ու Ադրբեջանի հետ սահմանամերձ բնակավայրերի բնակիչները քիչ են ներգրավված եղել խաղաղարար գործընթացներում, այսինքն՝ տեղ է գտել ըստ շրջանների ԼՂՀ քաղաքացիների անհամաչափ ներգրավում։ Նախագծերի իրականացման հարցում Ստեփանակերտը գերակայություն ունի, ինչն, անկասկած, չի նպաստում խաղաղարար նախաձեռնությունների զարգացմանն ու ժողովրդավարության արմատավորմանը նաև ծայրամասերում։ Ֆոկուս խմբերում ծավալված քննարկումներում նշվել է, որ խաղաղարար ծրագրերի մասնակիցները և առաջին հերթին ոչ կառավարական կազմակերպությունները մեծամասամբ հանդիսանում են գյուղաբնակների, հատկապես՝ սահմանամերձ բնակավայրերում ապրողների հետ ամուր ու մշտական կապեր չունեցող «մայրաքաղաքային» հաստատություններ։ Ծրագրերին մասնակցելու համար հազվադեպ են ներգրավվել ծայրամասերում ապրողները, ինչպես նաև նույն այդ ծրագրերի արդյունքները հազվադեպ են ներկայացվել գյուղաբնակներին, հատկապես, սահմանամերձ բնակավայրերի բնակիչներին։

Խաղաղարար նախաձեռնությունների հիմնական թեմատիկան

Նախաձեռնություններն առաջին փուլում ուղղված էին հումանիտար խնդիրների լուծմանը, որպիսին էին ռազմագերիների ու պատանդների ազատումը, անհայտ կորածների որոնումները, փախստականների ու

1 «Աստանայում Ղազախստան, ԵԱՀԿ գագաթաժողովում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների և Ադրբեջանի ու Հայաստանի նախագահների համատեղ հայտարարություն». OSCE. Մատչելի է այստեղ՝ http://www.osce.org/ru/home/87440; Statement by H.E. Ms. Hillary Rodham Clinton, US Secretary of State [ԱՄՆ պետքարտուղար՝ տիկին Հիլարի Ռոդհեմ Քլինթոնի հայտարարությունը], Astana, 1 December 2010.Մատչելի է այստեղ՝ http://www.osce.org/cio/73875; Joint statement by the Presidents of the United States, the Russian Federation and France on Nagorno-Karabakh ԱՄՆ[ԱՄՆ, ՌԴ և Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի հարցով], Los Cabos, Mexico, OSCE Press Release, 19 June 2012. Մատչելի է այստեղ՝ http://www.osce.org/mg/91393

ՆՏԱ-ների սոցիալական ու հոգեբանական վերականգնումը: Այնուհետև՝ զանգվածային լրատվության միջոցների զարգացմանը, թշնամու կերպարի վերացմանը, հակամարտող կողմերի միջև վստահության կառուցմանը և հաշտեցման ու խաղաղ գոյակցության գործընթացների նախապատրաստմանը: Ինչպես նաև՝ ատելության քարոզչությունից հրաժարմանը, վստահության մթնոլորտի ստեղծմանը, ԶԼՄ-ներում ղարաբաղյան հիմնախնդրի ընկալման և լուսաբանման խնդիրներին:

Խաղաղարար նախաձեռնությունների առանցքը եղել է հակամարտության խաղաղ ու քաղաքակիրթ կարգավորումը: Առաջին «փորձարկային» խաղաղարար նախաձեռնություններում կարևոր էին ոչ այնքան քննարկումների թեմաները, որքան կլոր սեղանի շուրջ հակամարտող կողմերի ներկայացուցիչների բուն մասնակցությունը: Առաջին փուլը կարելի է համարել միմյանց հարմարվելու ժամանակաշրջան: Հրավիրվում էին նաև այլ թեժ կետերից ներկայացուցիչներ՝ ցույց տալու և ապացուցելու համար, որ հիմնախնդիրների քաղաքակիրթ քննարկումները հնարավոր ու անհրաժեշտ են:

Կային ինչպես ներքին գործընթացներում, այնպես էլ խաղաղարար գործընթացում կանանց դերի բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ: Նաև փորձեր էին արվում խաղաղարար գործընթացներում ներգրավել նախկին հրամանատարներին ու կոմբատանտներին, սակայն այս ռեսուրսը հետագայում հայտնվեց խաղաղարար գործընթացի շրջանակներից դուրս:

Խաղաղարար նախաձեռնությունների գնահատումը

1992-1997 թվականներին հաջողված կարելի է համարել հումանիտար խնդիրների լուծմանը միտված խաղաղարար նախաձեռնությունները: Հաջողության պատճառները հետևյալն էին.

- պատերազմի պայմաններում խնդիրների լուծման անհետաձգելի բնույթը,
- հակամարտող կողմերի միջև հաղորդակցման և հրատապ հումանիտար խնդիրների լուծման այլ խողովակների բացակայությունը կամ սահմանափակությունը (կապեր հաստատվում էին ՀԿ-ների մակարդակով),
- հանրային մեծ աջակցություն,
- իշխանությունների կողմից քաղաքացիական նախաձեռնությունների աջակցություն,
- նախաձեռնությունների վառ արտահայտված սոցիալական պատվերի առկայություն:

Լեռնային Ղարաբաղի ոչ կառավարական հատվածի զարգացման վրա դրական ազդեցություն են ունեցել DFID-ի ծրագրերը, որոնց իրականացմանը մասնակցել են մի շարք տեղական ՀԿ-ներ International Alert և Conciliation Resources կազմակերպությունների առաջնորդությամբ, որոնք դրել են ժողովրդավարական ինստիտուտների կառուցման առումով նոր մոտեցումների հիմքը՝ այլընտրանքային լրատվամիջոցների ստեղծմամբ և լրագրողական կադրերի պատրաստմամբ:

Հանրային քննարկումներում նշվել է «Դեմո» անկախ թերթի նշանակությունը՝ թերթ, որը դարձել էր, եթե կարելի է այսպես ասել, ժողովրդավարական ճաշակի տարածողը Լեռնային Ղարաբաղում: Ֆոկուս խմբերի մասնակիցները նշել են առնվազն 2-3 անկախ լրատվամիջոցների առկայության անհրաժեշտությունը: Զանգվածային լրատվության միջոցների զարգացումը հակամարտությունների խաղաղ փոխակերպման հարցերում հասարակական կարծիքի փոփոխման կարևոր գործիք է: Այս առնչությամբ կարևորվել է էլեկտրոնային ԶԼՄ-ների և տեղեկատվության տարածման՝ աշխարհում առկա ժամանակակից այլ միջոցների զարգացումը, ներառյալ սոցիալական ցանցերի մեծ ընտրանին: Շատ կարևոր է համարվել ԼՂՀ-ում այնպիսի սերնդի նախապատրաստումը, որն ունակ կլինի խաղաղարար նախաձեռնություններ իրականացնել տեղեկատվական ոլորտում:

Ծրագրերը կարող են հաջողված լինել, եթե դրանք թափանցիկ են, տիրապետում են հանրության ժողովրդավարական զարգացման ռեսուրսներին և ունեն կրթական ուղղվածություն:

Դրական է համարվում IKV Pax Christi-ի կողմից հովանավորված «Անկախ քաղաքացիական Մինսկի գործընթաց» նախագիծը, հատկապես կարճ ժամանակահատվածում ձեռք բերված արդյունքները (ընդունվել են հռչակագրեր, որոնք անվիճելի ճեղքում են համարվում հակամարտող երեք կողմերի փորձագետների գիտակցության մեջ): Սակայն այս նախաձեռնությունը հետագայում աջակցություն չի ստացել դոնորների կողմից:

Միևնույն ժամանակ՝ հարցման մասնակիցներից մեկը բացասական կարծիք է հայտնել այս ծրագրի հեռանկարների վերաբերյալ՝ ծրագիր, որում չկա մասնակիցների հստակ արտահայտված պատկանելություն այն երկրներին, որոնց նրանք ներկայացնում են: Նրա կարծիքով, եկել է պահը, երբ պետք է հստակ հայտարարել, որ մենք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներ ենք և հենց մենք ենք ներկայացնում մեր երկրի շահերը, այլ ոչ թե նրանք, ովքեր ներկայումս ապրում են ԼՂՀ-ի սահմաններից դուրս և իրենց անվանում փախստականներ Լեռնային Ղարաբաղից:

Նշվել է 2001-2003թթ. Բաց հասարակության ինստիտուտի ցանցային ծրագրի շրջանակներում Ստեփանակերտի մամուլի ակումբի մասնակցությամբ ու Երևանի մամուլի ակումբի և Բաքվի մամուլի ակումբի իրականացրած ուսումնասիրությունների կարևորությունը: Այս ծրագրի շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների և Ադրբեջանի, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի լրատվամիջոցների դիտարկման արդյունքները որպես օգտակար դիդակտիկ նյութեր են ծառայել շատ խաղաղարար կազմակերպությունների ու նախաձեռնությունների համար:

Հաջողված նախաձեռնություն է համարվել «Հելսինկյան նախաձեռնություն-92» կազմակերպության Լեռնային Ղարաբաղի կոմիտեի հովանու ներքո 2004 թվականից ի վեր գործող Բանավիճային ակումբը, որը հանրաճանաչ էր ղարաբաղյան հանրությունում:

Որպես միջազգային նախագծերի իրականացման հաջողված օրինակ, բերվել է այսպես կոչված «Դարտմուտյան գործընթացը», որում հակամարտող երկրների ինչպես պաշտոնական շրջանակների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները փորձում էին առաջարկություններ մշակել ԵԱՀԿ Մինսկի խմբի համար: 2001 թվականին մեկնարկած ծրագիրը փաստորեն մինչև 2006 թվականը այլընտրանքային նեցուկ էր քաղաքացիական մակարդակով խաղաղարար նախաձեռնությունների համար և գործնականում աջակցություն է ստացել հակամարտող կողմերի իշխանական կառույցների ներկայացուցիչների կողմից:

Հաջողված է համարվել Conciliation Recourses կազմակերպության կողմից հովանավորվող «Երկխոսություն՝ ֆիլմերի միջոցով» ծրագիրը, որին ղարաբաղյան կողմից մասնակցում է Ստեփանակերտի մամուլի ակումբը: Սույն ծրագրի դրական տարրերից է դրա, ըստ էության, երկկողմանի բնույթը՝ Բաքվում և Ստեփանակերտում ստեղծված ստեղծագործական խմբերի երիտասարդ մասնակիցները փորձառու մասնագետների ղեկավարությամբ անպաճույճ վավերագրական ֆիլմեր էին նկարահանում հակամարտության գոտում ապրող մարդկանց մասին:

Ֆոկուս խմբերի մասնակիցներից մեկը նշել է Եվրամիության և “Care” (Ավստրիա) կազմակերպության կողմից հովանավորված «Կանանց ներգրավում և կանանց հնարավորությունների ամրապնդում հանուն խաղաղության Հարավային Կովկասում» գենդերային հարցերով նախագծի իրականացման կարևորությունը:

Բավականին հաջողված և օգտակար ծրագիր է համարվում «Անալիտիկոն» անկախ վերլուծական հանդեսը, որը ներկայումս միակ անկախ պարբերականն է Լեռնային Ղարաբաղում, որտեղ այլընտրանքային կարծիք է հայտնվում, և հրապարակվում են բացառիկ հարցազրույցներ ու այլ նյութեր Ադրբեջանից: Հանդեսը 2009 թվականից հրատարակում է Ստեփանակերտի մամուլի ակումբը: 2010 թվականի կեսերից այն Conciliation Recourses կազմակերպության միջոցով ֆինանսական աջակցություն է ստանում EPNK-ից: Սույն նախագծի շահառուներն են իշխանությունները, փորձագիտական հանրույթը, ՀԿ-ները և ուսանողությունը:

Օգտակար ու հաջողված են համարվել այլ հակամարտությունների ուսումնասիրությանն ուղղված International Alert կազմակերպության ծրագիրը և տեղացի և արտասահմանյան փորձագետների մասնակցությամբ ԼՂՀ տարբեր քաղաքներում անցկացված հանրային քննարկումները : Ողջունվում է նաև ղարաբաղցի լրագրողների ներգրավումը նման ծրագրերում: Ֆոկուս խմբերում կարծիք է հայտնվել Հարավային Կովկասի բոլոր վեց հանրությունների/սուբյեկտների ներկայացուցիչների մասնակցությամբ տարածաշրջանային նախագծերի արդյունավետության վերաբերյալ: Նման ծրագրերը թույլ են տալիս չկենտրոնանալ տեղական հակասությունների վրա և տարածաշրջանի հեռանկարները դիտարկել ավելի լայն համապատկերում:

Մասնակիցները համակարծիք էին նրանում, որ ժողովրդավարության արմատավորումը, ներառյալ մարդու իրավունքների պաշտպանությունը և քաղաքացիական հասարակության կառուցումը, անկախ լրատվամիջոցների զարգացման հետ միասին պետք է դառնան խաղաղարար բոլոր նախաձեռնությունների

գերակա ուղղություններ։ Ցանկացած հակամարտություն կայուն լուծում չի ունենա առանց ներգրավված հանրությունների ժողովրդավարացման։ Եղել են նաև իրականությունից հեռու նախագծեր, բայց նույնիսկ դրանք չի կարելի ձախողված համարել՝ ելնելով «կարևոր է ոչ միայն արդյունքը, այլև բուն գործընթացը» տրամաբանությունից։ Իսկ ահա արդյունավետության տեսանկյունից ավելի շատ նշվել են լրագրողական ծրագրերը, որոնց արդյունքում հրատարակվել են գրքեր, հանդեսներ, նկարահանվել են ֆիլմեր, որոնք հակամարտությամբ հետաքրքրվող մարդկանց ապահովել են անհրաժեշտ տեղեկատվությամբ։ Ֆոկուս խմբերի մասնակիցներից մեկն ասաց, որ հակամարտող կողմերի ներկայացուցիչների կողմից նկարահանված ֆիլմերը ուղեցույց են հանդիսանում երիտասարդ խաղաղարարների համար։

Ֆոկուս խմբերի որոշ մասնակիցներ ընդգծել են կոնկրետ արդյունքների և «արտադրանքի» առկայության կարևորությունը՝ նշելով, որ դա կարող է չափանիշ լինել խաղաղարար նախագծերի գնահատման դեպքում։

Հարցվածներից մեկի կարծիքով՝ ոչ քիչ մարդիկ են կարծում, որ համատեղ բիզնես-ծրագրերը նույնպես կարող են նպաստել հիմնախնդրի խաղաղ լուծմանը։ Նաև այնպիսի ծրագրեր են եղել, որոնց արդյունքում համատեղ արտադրանք է թողարկվել։ Նշվել է, որ հանրությունները քիչ են տեղեկացված նման նախագծերի մասին։ Նույն փորձագետը նշել է նաև այն ծրագրերի կարևորությունը, որոնցում ներգրավվում է հակամարտող կողմերի երիտասարդությունը։

Ֆոկուս խմբերի մասնակիցներն անհեռատես ու վտանգավոր են համարում միջհամայնքային մակարդակով ծրագրերի նախաձեռնման կամ էլ արդեն իսկ գործող նախագծերին համայնքների ձևաչափ հաղորդելու փորձերը։[2]

Որպես անհաջողություն գնահատվել առաջին փուլի որոշ ծրագրեր ու հանդիպումներ, որոնց ժամանակ ադրբեջանցի մասնակիցները դեմ են արտահայտվել Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցությանը. անհաջողության պատճառներից մեկն էլ նման հանդիպումների ոչ բավարար նախապատրաստումն էր։ Հարցվածներից մեկը բերեց խաղաղարար նպատակների համար մասնակիցների սխալ ընտրության մի օրինակ ոչ հեռու անցյալից, ընդգծելով մասնակիցների և գործընկեր կազմակերպությունների ընտրության չափանիշների կարևորությունը նաև ներկա փուլում։

Որոշ մասնակիցների կարծիքով, հաջողություններում և անհաջողություններում շատ կարևոր է եղել ծրագրերի համակարգողների և ուսուցանողների դերը։

Քաղաքականության մակարդակով խաղաղարար նախաձեռնությունների ազդեցությունը

Խաղաղարարության առաջին փուլում քաղաքացիական հասարակության նախաձեռնություններն էապես ազդել են ինչպես հումանիտար ոլորտում պետության քաղաքականության, այնպես էլ բանակցային գործընթացի վրա։

Ոչ կառավարական կազմակերպությունների միջնորդությամբ անմիջական կապ է հաստատվել Ադրբեջանի և ԼՂՀ-ի իշխանությունների ներկայացուցիչների միջև (Հ.Հաջիզադե-Ա.Ղուկասյան, Մոսկվա, 1993թ.)։

Խաղաղարար նախաձեռնություններից մեկը կանխել է մի կողմից՝ Հայաստանի ու ԼՂՀ-ի և մյուս կողմից՝ Ադրբեջանի միջև ռազմական դիմակայության նոր շրջապտույտը։ Խաղաղարար նախաձեռնությունների ուշադրության կենտրոնում առաջին հերթին ռազմական գործողությունների հետևանքով ծագած խնդիրներն էին, որոնց լուծումն անհետաձգելի բնույթ էր կրում և թույլ էր տալիս հակամարտող կողմերի միջև փոխադարձ վստահության հատկանիշներ դրսևորել։ Սա նպաստել է խաղաղարար գործընթացում քաղաքացիական հասարակության դերի ուժեղացմանը։ Ուշադրության կենտրոնում էին ռազմագերիների ու պատանդների խնդիրները, ինչպես նաև փախստականների և ներքին տեղաշարժված անձանց սոցիալական ու հոգեբանական վերականգնման հարցերը։ «Հելսինկյան նախաձեռնություն-92» ոչ կառավարական կազմակերպությունը, օգտագործելով հանրային աջակցության գործոնը, կարողացավ

2 «ԼՂՀ-ում քննարկում են բանակցային գործընթացի ներկայիս վիճակը». Panarmenian.net, 7 հուլիսի 2009թ. Մատչելի է այստեղ՝ http://www.panarmenian.net/rus/world/news/33889/; Կ.Օհանյան. «Ադրբեջան. հայերի հետ երկխոսությունը “քաղաքական նրբերանգներ”է ձեռք բերում», Armedia.am, 14 դեկտեմբերի 2011թ. Մատչելի է այստեղ՝ tp://armedia.am/?action=NKR&what=show&id=1247167004&lang=rus; Մ.Մայիլյան. «Ադրբեջանական իշխանությունների “կիպրոսյան սցենարը”ձախողվել է», Armtoday.info, 30 նոյեմբերի 2011թ. Մատչելի է այստեղ՝ http://armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=56180

հումանիտար ոլորտում ճիշտ որոշումների ընդունման նպատակով արդյունավետորեն ներազդել Լեռնային Ղարաբաղի կառավարող էլիտայի վրա: Չնայած ռազմականացված իրավիճակին՝ ԼՂՀ-ում քաղաքացիական հասարակության դերը հսկայական էր, և դրա հետ իշխանությունները չէին կարող հաշվի չնստել: Քաղաքացիական հասարակություն-հանրություն-իշխանություն փոխկապակցվածությունն ինտերակտիվ բնույթ էր կրում:

Այնպիսի ներքին հումանիտար խնդիրների դրական լուծումը, ինչպիսին էին ռազմագերիների ու պատանդների նկատմամբ վերաբերմունքի բարելավումը և նրանց ազատման օգտին իշխանությունների տրամադրվածությանը հասնելը, ոչ միայն ավելի է ամրապնդել երկրի ներսում այդ խնդիրներով զբաղվող կազմակերպությունների դերը, այլև դրական իմիջ է ստեղծել ինչպես արտերկրում, այնպես էլ Ադրբեջանի ու Հայաստանի գործընկերների հետ փոխհարաբերություններում: Արդյունքում ԼՂՀ-ում նման վերաբերմունքը և ոչ կառավարական կազմակերպությունների ու ընդհանրապես քաղաքացիական հասարակության գործունեությանն առնչվող հաջողությունները վարակիչ են դարձել Հայաստանում ու Ադրբեջանում, որտեղ իշխանությունները սկսել են գիտակցել պատերազմի հետևանքով ծագած հումանիտար խնդիրների լուծման գործում քաղաքացիական հասարակության դերը:

Հակամարտության կողմերի իշխանական կառույցների միջև անմիջական կապերի բացակայության պայմաններում ռազմական գործողությունների սկզբնական փուլում հակամարտող կողմերի քաղաքացիական հասարակությունների գործնական համագործակցությունը սկսել է լուրջ արդյունքներ տալ: Օրինակ, քաղաքացիական հասարակության գործունեության շնորհիվ և ԵԱՀԿ Մինսկի խմբի ու Միջազգային Կարմիր խաչի աջակցությամբ հաջողվեց առանց որևէ նախապայմանի ազատել ավելի քան 500 ռազմագերիների ու պատանդների, ընդ որում՝ այդ թվում նաև նրանց, ովքեր Ադրբեջանի իշխանությունների կողմից մահապատժի կամ էլ տևական ժամկետով ազատազրկման էին դատապարտվել: Հավանաբար, նման հաջողությանը նպաստել է նաև այն իրավիճակը, երբ հակամարտող կողմերի քաղաքացիական հասարակությունը անհետաձգելի խնդիրների լուծման միակ խողովակն էր և ընդգրկում էր ղարաբաղյան հանրության գործնականում բոլոր շերտերը, ներառյալ իշխանությունների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ, գործարարներ, լրատվամիջոցների, պատերազմի զոհերի հարազատների, դպրոցականների, արվեստի բնագավառի ներկայացուցիչներ: Ահա թե ինչու է իշխանությունն ըստ ամենայնի աջակցել քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին: Հումանիտար հարցերով, ընտանիքների՝ սահմանի տարբեր կողմերում հայտնված անդամների հանդիպման, կանանց խնդիրների քննարկման նպատակներով սահմանը հատելուն առնչված նախաձեռնություններն իրականացվում էին ԼՂՀ-ի, Ադրբեջանի ու Հայաստանի սահմանամերձ գոտիներում: Ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ Ադրբեջանի ու Հայաստանի իշխանություններն աջակցել են նման նախաձեռնություններին, քանի որ դրանք իրենցից սոցիալական հստակ պատվեր էին ներկայացնում, իսկ իշխանություններն ու հանրությունն այդ պատվերի կատարման կարիքն ունեին: Ու այդ պատվերի կատարման միակ խողովակն այն կառույցներն էին, որոնք գործում էին հակամարտող կողմերի քաղաքացիական հասարակություններում:

Այսպիսով, պատերազմական և առաջին հետպատերազմական տարիներին քաղաքացիական հասարակությունը հանդես էր գալիս որպես խաղաղարար գործընթացի «օրենսդիր» և բավականին ազդեցություն ուներ ինչպես իշխանությունների, այնպես էլ միջազգային միջնորդների վրա:

Ներկայիս պայմաններում, երբ ղարաբաղյան կողմը պաշտոնապես չի մասնակցում բանակցային գործընթացին, ԼՂՀ իշխանությունները հասկանում են հանրային մակարդակով քննարկումներին ղարաբաղյան ներկայացուցիչների մասնակցության կարևորությունը, բայց երբեմն խանդով են վերաբերվում նրանց, երկյուղելով խաղաղարար տարբեր նախաձեռնություններում ծուղակներից : Դրա հետ մեկտեղ նրանց հետաքրքրում է վստահության կամուրջների կառուցման գործում ոչ կառավարական կազմակերպությունների փորձը և Հայաստանում ու Ադրբեջանում հանրային տրամադրությունների մասին տեղեկատվությունը:

Ֆոկուս խմբերի որոշ մասնակիցներ նշել են այն հանգամանքը, որ ղարաբաղյան իշխանական շրջանակներում քիչ են նախկին հասարակական ակտիվիստները, և դա նույնպես ազդում է ոչ կառավարական կազմակերպությունների առաքելության կարևորությունը չգիտակցելու վրա:

Դրա հետ մեկտեղ իշխանությունները մտածում են միջազգային շրջանակներում իրենց իմիջի մասին և հանուն դրա փորձում են «կառուցողական» հարաբերություններ ունենալ ՀԿ-ների հետ:

Այս ամենը վկայում է այն մասին, որ, այսպես թե այնպես, երրորդ հատվածի հետ հաշվի են նստում Լեռնային Ղարաբաղում: Միևնույն ժամանակ, սույն ուսումնասիրության շրջանակներում հարցվածներից ոմանք հակված էին կարծելու, որ խաղաղարար նախաձեռնությունները ոչ մի ազդեցություն չեն ունեցել քաղաքականության վրա:

Խաղաղարար նախաձեռնությունների ազդեցությունը դրանցում ներգրավված շահառուների խմբերի՝ հակամարտության նկատմամբ վերաբերմունքի վրա

Խաղաղարար նախաձեռնությունների մասնակիցները նշում են ծրագրերի անվիճելի ազդեցությունը ներգրավված շահառուների վրա՝ փոխվել է ներգրավված մարդկանց ներուժը (գիտելիքները, հոգեկերտվածքը, ակտիվությունը հանրությունում, հանդուրժողականությունը և այլն): Հակամարտության ու ընդդիմախոսների նկատմամբ շահառուների վերաբերմունքը զգալիորեն տարբերվում է նրանց վերաբերմունքից, ովքեր հնարավորություն չեն ունեցել ներգրավվելու խաղաղարար նախաձեռնություններում:

Ընդգծվել է պրոֆեսիոնալ ներուժի մեծացմանն ուղղված ծրագրերի անհրաժեշտությունը: Ըստ հարցվածների՝ հարկ է ներգրավել ոչ միայն դոնորների ֆինանսական ռեսուրսները, այլև հասարակական կարծիքի փոխակերպման առումով եվրոպական գաղափարախոսության մեթոդաբանությունը և արժեհամակարգը (հումանիտար արժեքների ու մասնագիտական գիտելիքների վրա խարսխված հանրային ապաքաղաքական կարծիք):

Չկան խաղաղարար գործընթացների մասնակիցների գիտակցության մեջ կատարված փոփոխությունների ու մետամորֆոզների որակական և քանակական ճշգրիտ ցուցանիշներ ու չափանիշներ:

Դա ավելի շատ ներքին, ոգեղեն գործընթաց է: Սակայն եթե համեմատելու լինենք առաջին հանդիպումների մթնոլորտը վերջին տարիների խաղաղարար նախաձեռնությունների հետ, ապա փոփոխությունները տեսանելի կլինեն անգամ անզեն աչքով: Ներկայումս քննարկումներն անցնում են շատ ավելի ազատ ու անկաշկանդ մթնոլորտում, փոխվել է բուն քննարկումների դիսկուրսը: Խաղաղարար նախագծերի շատ մասնակիցներ խոստովանել են, որ նրանց համար այդ ծրագրերը ջրբաժան են եղել, և որ նրանց գիտակցության մեջ ղարաբաղյան հակամարտության ընկալումը բաժանված է երկու ժամանակահատվածի՝ «մինչև» խաղաղարար ծրագրերին մասնակցելը և «հետո»:

Խաղաղարար նախաձեռնությունների իրականացման արդյունավետության վրա ազդող գործոնները

Նախաձեռնությունների իրականացմանը նպաստող գործոնների թվում մասնակիցների մեծամասնությունն առաջին հերթին նշել է հանրության և իշխանությունների կողմից սոցիալական, քաղաքական և հումանիտար պատվերի առկայությունը: Քաղաքացիական հասարակության ներուժը սահմանող կարևոր տարրերից է ինքնազոհողության և մեծամասնության ու իշխանությունների դիրքորոշումից մեծապես տարբերվող դիրքորոշում ընդունելու ունակությունը: Նման ներուժի առկայությունը թույլ է տալիս այնպիսի գաղափարներ առաջ քաշել, որոնք, թվում է, պահանջված չեն ներկայիս օրակարգում, բայց որոնք անհրաժեշտ են տարածաշրջանային անվտանգության ապահովման և հանրությունում ինչպես խաղաղության մշակույթի, այնպես էլ ժողովրդավարական ճաշակի ձևավորման համար, որոնք էլ, ի վերջո, նյութականացվելու են ԼՂՀ քաղաքացիների ֆիզիկական անվտանգության բարձրացման ոլորտում:

Դրա հետ մեկտեղ, եթե ոչ բոլորը, ապա մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ քաղաքացիական հասարակության քաղաքականացման գործոնը նախագծերի հաջող իրականացման գլխավոր խոչընդոտն է:

Նշվել է նաև Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանության ու ռևանշիզմի քաղաքականության գործոնը, որը խանգարում է հակամարտող կողմերի քաղաքացիական հասարակությունների միջև վստահության ներուժի հաստատմանը:

Իսկ որպես նախագծերի արդյունավետ իրականացման երրորդ՝ առավել էական գործոն, նշվել է թույլ զարգացած ժողովրդավարությունների (ավտորիտար վարչակարգերի) առկայությունը:

Ֆոկուս խմբերի որոշ մասնակիցների կարծիքով՝ նպաստող գործոններ էին անմիջական շփումները, ծրագրերի շրջանակներում գործնական աշխատանքը և ընդհանուր պրոֆեսիոնալ հետաքրքրությունը, իսկ բացասական գործոններ էին կողմերի միջև անվստահության ընդհանուր մթնոլորտը և քարոզչական կարծրատիպերը։

Ղարաբաղյան քաղաքացիական հասարակության ներկայիս վիճակը խաղաղարարության համար սահմանափակ հնարավորություններ է պարունակում։ Որպես կանոն, խաղաղարար գործընթացում գլխավորապես ներգրավված են անկախ հասարակական կազմակերպությունները (հիշտ է՝ կան նաև ԳՈՆԳՈ տիպի ոչ կառավարական կազմակերպություններ), որոնք կայացման ու զարգացման ոչ քիչ խնդիրներ ունեն։ Մասնավորապես, ԼՂՀ անկախ հասարակական կազմակերպությունները հայտնվել են երկու կրակի արանքում. մի կողմից՝ իշխանություններն այնքան էլ շահագրգռված չեն անկախ ՀԿ-ների առկայությամբ, ի դեմս նրանց տեսնելով մրցակիցների, մյուս կողմից էլ՝ պաշտոնական Բաքվի կոշտ դիրքորոշման պատճառով միջազգային ոչ կառավարական ու միջկառավարական կազմակերպությունների մեծ մասը խուսափում է անմիջականորեն համագործակցել ղարաբաղյան ՀԿ-ների հետ։ Ահա թե ինչու սույն ուսումնասիրության ժամանակ հարցվածների որոշ մասնակիցներ, նշելով տարածաշրջանային ու միջազգային ծրագրերում ղարաբաղյան ոչ կառավարական կազմակերպությունների ներգրավման անհրաժեշտությունը, միաժամանակ ընդգծել են ղարաբաղյան ՀԿ-ների կայացմանն ու զարգացմանը միտված հատուկ նախագծերի կարևորությունը։

Եզրակացություն

Վերլուծելով ֆոկուս խմբերի մասնակիցների ու հարցվածների կարծիքները, ինչպես նաև հանրագումարի բերելով սույն հետազոտության հեղինակների սեփական փորձը և խաղաղարար նախաձեռնությունների ու հանրային տրամադրությունների դիտարկումները, կարելի է հետևյալ եզրահանգումներն ու առաջարկություններն անել.

- Տեղեկատվական պատերազմի պայմաններում անարդյունավետ են թե՛ բանակցային գործընթացը և թե՛ խաղաղարար գործունեությունը, ուստի միջնորդներն ու միջազգային հանրությունը պետք է նաև առանձնակի ուշադրություն դարձնեն հակամարտող կողմերի իշխանությունների ռազմատենչ հռետորաբանությանը։ Քանի դեռ շարունակվում է տեղեկատվական պատերազմը՝ լուրջ չեն ընդունվում հիմնախնդրի քաղաքական կարգավորման հեռանկարները:
- Խաղաղարար գործընթացը վարկաբեկող և դրա հեռանկարները սահմանափակող գործոն է հանդիսանում Ադրբեջանի իշխանությունների հակահայկական հռետորաբանությունը և հիստերիան։ Այնպիսի երևույթներ, ինչպիսին են Ռամիլ Սաֆարովի հերոսացումը և հանդուրժողական հայացքների համար ստեղծագործական մտավորականության, բարոյական հեղինակությունների (զորօրինակ, գրող Աքրամ Այլիսլիի) հալածումը, թուլացնում են խաղաղարար կազմակերպությունների դիրքերը հանրային գիտակցության մեջ:
- Միջնորդներն ու միջազգային հանրությունը պետք է լուրջ քայլեր ձեռնարկեն հակամարտության կարգավորման գործընթացում հակամարտող կողմերի հանրությունների ներգրավման ուղղությամբ։ Մինչդեռ միջնորդները, որպես կանոն, խուսափում են հանրության հետ շփումներից, սահմանափակվելով սոսկ ղեկավարությունների հետ հանդիպումներով։ Հանրությունները միշտ էլ անտեսվել են թե՛ սեփական իշխանությունների և թե՛ միջնորդների ու միջազգային խաղացողների կողմից:
- Շատ վտանգավոր է «ոչ պաշտոնական պաշտոնականությունը» խաղաղարար գործընթացում, երբ իշխանությունների հրապարակային ու ոչ հրապարակային մասնակցությամբ արվեստի ու այլ ոլորտների ներկայացուցիչներ հանդես են գալիս խաղաղարար նախաձեռնություններով։ Երբեմն ստիպված ենք լինում գործ ունենալ նման «խաղաղարարության» տևական հետևանքների հետ։ Օրինակ, հայ և ադրբեջանցի մտավորականների այցելությունները Բաքու, Երևան և Ստեփանակերտ կազմակերպվել են որպես հատուկ օպերացիաներ, իսկ դրանց հաջորդած մեկնաբանությունները, հատկապես՝ հայտնի երգիչ Փոլադ Բյուլ-Բյուլ օղլու հայտարարությունները, լուրջ վնաս են հասցրել խաղաղարարությանը:
- Խաղաղարարությունը չի կարող գաղտնապահական լինել, ուստի պիտի բացառել գաղտնի խաղաղարար նախաձեռնությունները (այսպես, հայ և ադրբեջանցի մտավորականների այցելությունները Բաքու, Երևան և Ստեփանակերտ նաև գաղտնիության շղարշով էին պատված. տպավորություն է ստեղծվում, որ ժողովուրդներին ուզում են հաշտեցնել թաքուն, որպեսզի դրա մասին ոչ ոք չիմանա, այդ թվում՝ նույն այդ ժողովուրդները):

- Խաղաղարար գործընթացին խանգարում է նաև բանակցային գործընթացի համատարած գաղտնապահությունը։ Ինչ խոսք, յուրաքանչյուր բանակցային գործընթաց ենթադրում է որոշակի գաղտնիություն, սակայն չի կարող ընդունելի լինել հակամարտող կողմերի հանրությունների լիակատար անտեղյակությունը բանակցային գործընթացի մասին։ Ավելորդ գաղտնապահությունը հակամարտող երկրների հանրություններին զրկել է ճակատագրական որոշումների նախապատրաստմանը մասնակցելու հնարավորությունից և բոլոր խաղաթղթերը տվել իշխանությունների ձեռքը:
- Առկա է խաղաղարար բոլոր նախաձեռնությունների ու ջանքերի համակարգման, խաղաղարար կազմակերպությունների ցանցի ստեղծման և խաղաղարար ծրագրերի մասնակիցների՝ խաղաղարար գործընթացի համար հավաքական պատասխանատվության ձևավորման անհրաժեշտություն։ Խաղաղարար նախաձեռնությունների ցաքուցրիվությունն ընդհանուր առմամբ խաղաղարարության անբավարար արդյունավետության պատճառներից մեկն է:
- Խաղաղարար ներուժի աճին կարող են նպաստել չճանաչված երկրների և, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ եվրոպական կառույցների հստակ դիրքորոշումն ու ռազմավարությունը, ինչը թույլ կտար այդ պետական կազմավորումներին ներգրավել եվրաինտեգրման ուղեծրում:
- Գոյություն ունի հակամարտությունների կարգավորման ու հակամարտող երկրների զարգացման հեռանկարների վերաբերյալ երկու կարծիք, երկու հայեցակարգ։ Ըստ առաջինի՝ միայն հիմնախնդրի շուտափույթ լուծումը կարող է նպաստել պետական շինարարության բնականոն ընթացքին ու իրական ժողովրդավարության կայացմանը։ Ըստ երկրորդի՝ միայն իրական ժողովրդավարության կայացումից ու քաղաքացիական հասարակության կազմավորումից հետո է հնարավոր հիմնախնդրի քաղաքական կարգավորումը։ Երկու հայեցակետերն էլ յուրովի իրավացի են, սակայն ըստ էության՝ ոչ բավարար։ Ամենայն հավանականությամբ, նախընտրելի է երկրորդ ուղին, քանի որ հակամարտող երկրներում այսօր առկա իրողություններն այնպիսին են, որ հանրությունները մեկուսացվել են բանակցային գործընթացից ու երկխոսությունից։ Ժամանակի ընթացքում տիրապետող է դառնում այն կարծիքը, որ ժողովրդավարության աճի համար պայմանների ստեղծումը բոլոր դեպքերում էլ պիտի հիմնախնդրի կարգավորումից առաջանցիկ լինի:
- Ժողովրդավարական զարգացման առումով հակամարտող երկրների անհամաչափությունը կարող է նոր մարտահրավեր դառնալ տարածաշրջանային կայունության համար։ Ու ընդհակառակը, որքան ժողովրդավարական դառնան տարածաշրջանի երկրները, այնքան հեշտ կլինի հասնել տարածաշրջանային ու եվրոպական ինտեգրման։ Եվրաինտեգրումը կարող է ընդհանուր դաշտ դառնալ ժողովուրդների հաշտեցման համար:
- Հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել Հայաստանում, Ադրբեջանում ու Լեռնային Ղարաբաղում անկախ ԶԼՄ-ների ինստիտուտի կայացմանը, ինչը կնպաստի այլընտրանքային կարծիքի դրսևորման ռեսուրսների ընդլայնմանը, կուժեղացնի խաղաղարար կազմակերպությունների հնարավորությունները և կաջակցի իսկական հասարակական կարծիքի ձևավորմանը։ Առաջատար լրատվամիջոցները և, հատկապես, հեռուստաընկերությունները վերահսկվում են իշխանությունների կողմից։ Հենց այդ վերահսկվող ԶԼՄ-ների միջոցով էլ քաղաքականություն է իրականացվում։ Այսօրինակ, լրատվամիջոցներն արտացոլում են ոչ թե հանրային, այլ կառավարող էլիտայի տրամադրությունները։ Այս վերջիններն էլ ներկայացվում են որպես հասարակական կարծիք։ Զարգացնելով երրորդ հատվածը և ամրապնդելով չորրորդ իշխանությունը՝ կարելի է հասնել հակառակ ազդեցության. «ընդհատակյա» (իսկական) հասարակական կարծիքը կարող է ազդել նաև քաղաքական իստեբլիշմենթի տրամադրությունների վրա:
- Շատ կարևոր է խաղաղարար ուղեծրում ներգրավել ոչ միայն մայրաքաղաքի ու խոշոր քաղաքների բնակիչներին, այլև գյուղաբնակներին, ինչը թույլ կտա խուսափել հասարակական կարծիքի անհամաչափությունից։

Երախտագիտության խոսքեր

Հետազոտության նախապատրաստման գործում ցուցաբերած անգնահատելի օգնության համար հեղինակները շնորհակալություն են հայտնում ֆոկուս խմբերի վարողներ Կարեն Օհանջանյանին («ՀՆ-92» ԼՂԿ) և Անահիտ Դանիելյանին (Ստեփանակերտի մամուլի ակումբ)։

International Alert.
346 Clapham Road, London SW9 9AP, United Kingdom
Tel +44 (0)20 7627 6800, **Fax** +44 (0)20 7627 6900
info@international-alert.org
www.international-alert.org

ISBN: 978-1-909578-38-8